



# ՔՐԻՍՏՈՆԵԿԱՊՐԵԼ

# Պողոսի նամակը Հռոմեական Եկեղեցուն

## Աստվածաշնչի մեկնություն անհատական կամ խմբակային ուսուցման համար

## գրված Ֆրեդ Սորիսի կողմից



## Հոսմեացիներին 1-ին մաս

1 – 8 զլուխներ



## **Ընթերցողի կամ առաջնորդի համար**

Աստվածաշնչյան այս մեկնուրյունները այնպես են բացատրում Աստծո Խոսքը, որ հետ լինի կարդան ու հասկանալի: Դուք կարող եք օգտագործել այս գրքերն Աստվածաշնչն ինքնուրյուն ուսումնասիրելու կամ ուրիշների հետ խմբակային ուսուցման ժամանակ: Խմբակային ուսուցման ժամանակ յուրաքանչյուր անձ պետք է ունենա իր գիրքը և եթե հնարավոր է՝ Աստվածաշնչն:

 **Այժմ կարդացեք.** Երբ հանդիպեք այդ գրքածքին, այն նշանակում է, որ դուք կամ ձեր խմբի առաջնորդը միշտ պետք է կարդա աստվածաշնչյան հատվածը, նախքան այս գրքի բառերը կարդալի:

 **Խոսե՛ք այս մասին.** Երբ հանդիպեք այս գրքածքին, ապա կան հարցեք, որ կարող են տրվել խմբակային ուսուցումների ժամանակ: Դրանք ընթերցողին օգնում են աստվածաշնչյան համարները հասկանալի:

 **Նյոթ՝ մտածելու համար.** Երբ տեսնեք այս նշանը, նշանակում է, որ հարցը պահանջում է ավելի ժամանակ և խորհրդադրյումն:

 **Քազում ընտրություն ունեցող հարցեք.** Երբ հանդիպեք այս գրքածքին, նշանակում է, որ կան հարցեք երեք հնարավոր պատասխաններով, մի քանիսը ճիշտ պատասխաններ են, մի քանիսը՝ սխալ: Այս հարցեքը ձեզ կօգնեն ավելի գգուշությամբ մտածել այն մասին, ինչ դուք կարդում եք: Այս հարցեքի պատասխանները տրված են գրքի վերջում: Դուք հարցեքը կարող եք օգտագործել ինըներք ձեզ ստուգելու համար:

 Երբ «զծերի մեջ վերցված քառակոսի» տեսնեք, դրանում գրված տեղեկությունը իմանականում աստվածաշնչյան ուսանողների, ուսուցիչների կամ քարոզիչների համար է:

Կամ նաև աստվածաշնչյան հավելյալ համարներ, որոնք ձեզ կտան կարևոր տեղեկություն: Աստված կօգտագործի դրանք ձեզ հետ խոսելու համար: Այդ պատճառով անհրաժեշտ է, որ դուք ստուգեք կարդալու բոլոր հատվածներն այժմ կամ հետո և օգտագործեք դրանք տանը ուսուցման ժամանակ: Ընթերցանության որոշ հատվածներ Հիմն Կոտակարանից են (ՀԿ), որը մենք «սուրբ գրություններ» ենք անվանում: Դա Աստվածաշնչի այն հատվածն է, որ գրվել է նախքան Հիսոս Քրիստոսի այս աշխարհում ապրելը: Ընթերցանության որոշ հատվածներ Նոր Կոտակարանից են (ՆԿ), Աստվածաշնչի այն հատվածը, որ գրվել է Հիսոս Քրիստոսի այս աշխարհում ապրելոց հետո:

Պատկերները Global Recordings Network (GRN) - ի հեղինակային իրավունքով ապահովված են: Օգտագործվել են թույլտվությամբ:

**Հռոմեացիներին 1-ին մաս Manna Bible teaching commentary © 2008, 2012**

**Fred Morris, Manna Publications (USA) Inc. All rights reserved.**

**God has enabled us to print this title in the following countries:**

**Revised Worldwide English edition first published in the UK in 2008**

Reprinted 2008 in Liberia (English). Reprinted 2009 in Nigeria (English)


Reprinted 2010 in Liberia (English). Reprinted 2011 in India (Telugu)

**Second edition** published 2012 in India (English), Cameroon (English). Reprinted 2013 in India (Tamil and Malayalam), D.R. Congo (Kiluba, Kisongye & French), Sierra Leone (English), Myanmar (Falam Chin). Reprinted 2014 in Myanmar (Burmese, Falam Chin). Reprinted 2015 in Myanmar (Falam Chin), D.R. Congo, Katanga (French and Kisongye), Cameroon (English). Reprinted 2016 in Cameroon (French and English), Myanmar (Falam Chin), Togo (French). Reprinted 2017 in Cameroon (English and French). Reprinted 2018 in Cameroon (French). Reprinted 2019 in Cameroon (English and French). Reprinted 2020: Mozambique (Portuguese). Reprinted 2021: Mozambique (Portuguese). Reprinted 2022: Kenya (English), Zambia (English). Reprinted 2023: Armenia (Armenian).

## Ներածություն

Պողոսն իր քուղբը գրել է Խտալիայի Հռոմ քաղաքում ապրող քրիստոնյաներին: Շատ հրեաներ էին ապրում Հռոմում և նրանցից շատերը հավատում էին Քրիստոսին: Սա Պողոսի մի քանի թղթերից մեկն է՝ հավատացյալներին ուղղված, ովքեր ապրում էին ահավոր չար աշխարհում, ինչպես հիմա է: Նա նրանց օգնում էր հասկանալ Սուրբ Գրքում գրված Աստծո նպատակը և խոստումները, նրանց քաջալերում էր վայելել իրենց փրկության օրինությունը և որիշներին ցույց տալ Աստծո փառքը: Այսօր էլ բոլոր երկրներում Քրիստոսի եկեղեցին Պողոսի այս ուսուցումների կարիքն ունի: Մենք բոլորս պետք է ուժեղ լինենք հավատքի մեր հասկացողության մեջ, որպեսզի մեր հասարակության մեջ կարողանանք ապրել որպես Աստծո մարդ:

Պողոսը հրեա էր:  
Նրան ուսուցանել էին  
Երուսաղեմի  
լավագույն  
ուսուցիչները (Գործը  
Առաքելոց 22:3): Երբ  
հարուցյալ Տեր  
Հիսուսը Դամասկոս  
գնալու ճանապարհին  
խոսեց նրա հետ, նա  
դարձավ հրեա  
հավատացյալ (Գործը  
Առաքելոց 9, 22 և 26-  
րդ գլուխներ): Հիսուսն  
ընտրեց նրան, ինչպես  
նաև որիշներին, որ  
Աստծո Բարի լուրը



Սողոսը, որ հետո կոչվում էր Պողոս՝ երբ Հիսուսը  
խոսեց նրա հետ Դամասկոսի ճանապարհին:

տարածեն (Հռոմեացիներին 1:1): Նրանք ճանաչվեցին որպես առաջին առաքյալներ՝ Աստծո դեսպաններ: Պողոսը հավատաց Հիսուսի մասին ճշմարտությանը և մկրտվեց: Հետաքայում Սուրբ Հոգին նրան ասաց, որ քարոզի նարդկանց, ովքեր հրեա չեն, ինչպես նաև՝ հրեաներին: Նա Հունաստանում և Մերձավոր Արևելում շատ եկեղեցական հաղորդակացություններ սկսեց: Սուրբ Գրություններից (Աստվածաշնչի Հիմ Կտակարանից) նա Աստծո ճշմարտությունն էր սպորտեցնում նրանց: Երբ որպես միահիններ ճանապարհորդում էր, կամ երբ բանտում էր, Պողոսը նոր քրիստոնյաներին նամակներ էր գրում: Պողոսի թղթերը կարևոր մաս են կազմում քրիստոնեական Աստվածաշնչում (Նոր Կտակարանում):

Հռոմում և Կողոսիայում Պողոսը եկեղեցիներ չի հաստատել, բայց նրանց, ինչպես նաև այլ եկեղեցիների, նամակներ է գրել: Պողոսն իր թղթերի մեջ մասը ավելի շուտ է գրել, քան Մատթեոսը, Մարկոսը, Ղուկասը և

Հովհաննեսն են իրենց ավետարանները գրել: Այդ պատճառով իր թղթերն օգնեցին քրիստոնյաներին ավելի իմանալ Քրիստոսի մասին, Աստծո ջշմարտության մասին, և թե ինչպես զրաբանան իրենց հավատի մեջ: Յուրաքանչյուր նամակում նա գրում էր, թե ինչ էին նրանք լավ անում, բայց նաև զգուշացնում էր, եթե սխալ բան էին անում, կամ եթե նրանց վարդապետությունը ջշմարտությունից շեղվելու վտանգի մեջ էր: Պողոսի թղթերը գրված են քրիստոնյաներին օգնելու, ամրապնելու, հավատի դժվարհասկանալի մասերը բացատրելու համար:

Պողոսի հռոմեացիներին ուղղված թուղթը բոլոր քրիստոնյաներին օգնում է պատրաստ լինել Աստծո համար գործելուն: Նոր հավատացյալի կամ ամբողջ խմբի համար այն սերտելու լավ նյութ է: Այս թղթի վարդապետությունը լավ հիմք է բոլոր հավատացյաների համար:

## ՊՈՂՈՍՆ ԻՆՉՈ՞Ւ ԳՐԵՑ ԱՅՍ ԹՈՒՂԹԸ

Զգիտենք, թե Հոռոմում, ե՞րբ է եկեղեցին հիմնվել: Հավանաբար, եթե որոշ հրեաներ պենտեկոստեի ժամանակ քրիստոնյա դարձան (Գործը Առաքելոց 2:10), վերադարձան Հռոմ և եկեղեցին հիմնեցին:

Հռոմում որոշ հրեա հավատացյաներ ասում էին, որ բոլոր հավատացյաները (հրեաները և ոչ հրեաները) պետք է պահեն Մովսեսի օրենքը, հատկապես՝ թվատությունը՝ հրեաների հատուկ նշանը: Կարևոր էր, որ այս սխալ ուսուցման մասին Պողոսը գրեր զաղատացիներին, կորնթացիներին, փիլիպպեցիներին, ինչպես նաև՝ հռոմեացիներին:

Պողոսի հռոմեացիներին գրելու մի այլ պատճառն էլ այն էր, որ նա ծրագիր ուներ: Նա ցանկանում էր շարունակել և նա մեկ ճանապարհորդության գնալ՝ ավելի շատ մարդկանց Հիսուսի մասին պատմելու և եկեղեցական նոր հաղողակցություններ սկսելու համար: Նա ցանկանում էր Հռոմ այցելել (Հռոմեացիներին 15:23-24) և այնտեղից Խսանիա մեկնել: Այս ընթացքում եկեղեցին Հռոմում բավական աճել էր: Նա այս նամակը գրեց նրանց իր այցին պատրաստելու համար:

Պողոսը նրանց ասաց, թե ինչի՞ն է հավատում, թե Սուրբ Հոգի Աստված ինչ էր իրեն ստվրեցրել: Նա ցանկանում էր դա փոխանցել բոլոր հավատացյաներին: Ահա թե ինչո՞ւ յուրաքանչյուր քրիստոնյա պետք է ուսումնասիրի Հռոմեացիներին ուղղված թուղթը:

Պողոսի թուղթն օգնում է հավատացյաներին ետ պահել սխալ ուսմունքի հետևելուց: Եթե այսօր նա այստեղ լիներ, մեզ կասեր, որ մենք Աստծո փրկությունը Շենք կարող գտնեն.

- առ Աստված հավատ ունենալով՝ առանց փորձելու Հիսուսին ճանաչել
- կրոնական ծեսերի, ուխտագնացության մասնակցելով, կամ բարի գործերով
- մեր ուժերով՝ փորձելով մեղքի հանդեպ փափազը կորցնել
- մեր ուժերով՝ փորձելով լավ և բարոյական վարք ունենալ
- մեր ուժերով՝ փորձելով ներքին խաղաղություն գտնել
- բավարարված լինել բաներով, որ Աստված է ստեղծել՝ առանց Նրան շնորհակալություն հայտնելու

- փորձել հնազանդվել օրենքներին և սովորությներին
- ՃԻԾ ՉԵ այս յոթ կերպերով փորձել Աստծուն գտնել և ճանաչել: Դրանք կարող են հանգստություն ու բավարարվածություն տալ, բայց ոչ՝ փրկություն: Հռոմեացիներին 1-8 գլուխներում Պողոսի հիմնական ուսուցումը Աստծու արդարությունն է, որ կարելի է ստանալ միայն Հիսուս Քրիստոսին հավատալով: Նա ասում է, որ բոլորը մեղք են գործել, ներառյալ՝ կրոնին հետևող մարդիկ, և մեղքը կարող է ներվել միայն հավատալով Հիսուսի կյանքին, մահվանը և հարությանը: Թող Աստծու Հոգին ծեզ օգնի հասկանալ այս բաները և կիրառել դրանք ձեր կյանքում: Հասկացողության պակասը մեզ բաժանում է Աստծուց (Եսայի 5:13): Աստծո հետ միաբանությունը մեր կյանքի մեջ խաղաղություն է բերում վաղուց խոստացված բարի լորով (Հռոմեացիներին 1:2):

 **Նյութ՝ մտածելու համար.** Ջո բառերով նկարագրի՞ր այն յոթ հանգամանքները, որոնք այսօր խանգարում են Աստծուն հավատացող մարդկանց ճշմարիտ փրկությանը:

## Հռոմեացիներին 1:1-7

### ՊՈՂՈՍԸ ԿԱՆՉՎՈՒՄ Է ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՆ ԼԻՆԵԼՈՒ

Պողոսն իր նամակների մեծ մասը սկսում է՝ հայտարարելով, որ ինքը «Հիսուս Քրիստոսի ծառան» է (1:1): Հռոմեացի ծառաները կամ սորուկները վաճառվում են, և նրանք ծառայում են իրենց տերերին: Նա իրեն անվանում էր «Քրիստոսի ծառան»:

Պողոսը նաև ասում է, որ «կանչված էր առաքյալ լինելու» և սուրբ կյանք ապրելու: Թեև ապրում էր այս աշխարհում, մեղավոր մարդկանց հետ, նա նրանց չէր պատկանում: Նա երբեք ետ չէր դառնա իր հիմ ապրելակերպին: Նա Հիսուսին էր պատկանում: Նա հավատում և հնազանդվում էր Հիսուսի խոսքերին (Մարկոս 1:15): Այս անելու համար նրան տրվեց Սուրբ Հոգու խոստացված զորությունը:

Աստված կանչեց Պողոսին Աստծո բարի լորը քարոզելու համար (1:1): «Առաքյալ» նշանակում է «ուսուարկված»: Պողոսը գիտեր Սուրբ Գրությունները (մեր Հին Կոտակարանը): Նա գիտեր այն բոլոր բաները, որ մարգարեներն անել են, որ կատարվելու են: Նա գիտեր, որ դրանք կատարվել են: Նա գիտեր, որ մարգարեները Հիսուսի մասին են խոսում (1:2):

Սա է այն Ավետարանը կամ Բարի լուրը, որ Պողոսը ցանկանում էր բարոգել (1:3-4):

- Հիսուսն իսկապես մարդու Որդի և իսկապես Աստծո Որդի էր, Յեղուան՝ խոստացված Սեսիան: Միայն Նրա միջոցով ենք մենք փրկվում:
- Աստված Հիսուսին մեռելներից հարություն տվեց, և Հիսուսը հիմա կենդանի է որպես մեր Տեր և Փրկիչ: Պողոսը սա գիտեր, նա հանդիպել էր

**Հիսուսին (Գործը Առաքելոց 9:5): Սիայն Նրա միջոցով մենք  
հավիտենական կյանք ունենք:**

Պողոսը դարձավ առաքյալ և առաջնորդ, բայց նա նաև ծառա էր: Հիսուս Քրիստոս իր Տերն էր, իր կյանքի տերը (1:5): Նա շատ էր ցանկանում, որ ուրիշներն էլ հետևեին Հիսուսին և սխալ վարդապետությունների ու հինավորց ավանդությների ետևից չգնային: Բայց ամենից առաջ, ցանկանում էր նրանց հավատքի մեջ հաստատել (1:6, 7):  
Զո բառերով նկարագրի՛ր, թե ինչպես և ինչու պետք է քաջալերենք այլ հավատացյալների հավատը:

## Հռոմեացինեին 1:8–17

### **ՊՈՂՈՍԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ՀՌՈՄ ԳՆԱԼՈՒ ԱՄԱՊԱՐՀԸ**

Պողոսը ցանկանում էր պատրաստել Հռոմ այցելելու իր ճանապարհը: Նա ցանկանում էր, որ հռոմեացիները պատրաստ լինեն իրեն ընդունելու: Նա հսկանում էր, որ Աստված ցանկանում է, որ ինքը Հռոմ գնա՞ Հիսուս Քրիստոսի Բարի լուրջ քարոզելու համար (1:15 և Գործը Առաքելոց 23:11): Նա մեծ փափագ և խանդակառություն ուներ դա անելու:

8-16-րդ համարներում Պողոսն օգնեց Հռոմի հավատացյալներին պատրաստվել իր այցի համար: Նա ցանկանում էր, որ նրանք իմանային, որ Հիսուսն է իրեն ուղարկում որպես առաքյալ (պատգամարեր), առաջնորդ և ծառա (1:1): Նրա համար կարևոր էր իր Հռոմ այցելության ճանապարհը պատրաստելու:

Պողոսը նրանց ասաց, որ շնորհակալ էր Աստծուց հռոմեական եկեղեցու համար (1:8): Նա գովարանում էր նրանց (1:8), աղորում էր նրանց համար (1:9–10), ծրագրում էր հանդիպել նրանց (1:10), փափազում էր տեսնել նրանց (1:11), շատ անգամ էր փորձել նրանց այցելել (1:13) և տվեց բազմաթիվ պատճառներ նրանց հետ խոսելու համար (1:11–16): Այս կերպերով նա եկեղեցուն քաջալերում էր իրեն ողջունելու:

 **Նյութ՝ մտածելու համար.** Այսօր քարոզիչները և ուսուցիչներն ի՞նչ պատգամ պետք է փափազեն տալ եկեղեցուն: Զո բառերով բացարի՛ր, թե ինչ պատրաստություն է անհրաժեշտ այլ հավատացյալներին այցելելու և ծառայելու համար:

Պողոսը զգիտեր, որ երբ Աստված նրան Հռոմ ուղարկեր, որպես բանտարկյալ պիտի գնար: Հռոմում կարող էր քարոզել և սովորեցնել, բայց պետք է իր տանը մնար, քանի որ բանտարկյալ էր (Գործը Առաքելոց 28:16): Խսպանիա գնալու ճանապարհին Պողոսը ուզում էր Հռոմ գնալ: Բայց Աստծո ծրագիրը Պողոսի ծրագրից տարբեր էր: Զինվորները Պողոսին Հռոմ տարան՝

որպես տնային բանտարկյալ: Այնտեղ նա սովորեցնում և քարոզում էր բոլոր նրանց, ովքեր այցելում էին իրեն: Մինչ Հռոմում էր՝ նա շատ այլ նամակներ գրեց ամբողջ աշխարհով մեկ հավատացյալներին սովորեցնելու համար: Սու 2000 տարի նրա նամակները առաջնորդություն և օրինություն են եղել: Սա ապացուցում է, որ երբ մեր կյանքում գործերը սխալ են ընթանում, Աստծո նպատակը դեռ կարող է իրականանալ, եթե վստահենք և աղորենք:

Պողոսն ասաց, որ Հռոմ այցելել ցանկանալու պատճառներից մեկն այն էր, որ իր պարտականությունն էր Հռոմի բոլոր մարդկանց քարոզելը (1:14, 15): Հռոմ գնալու իր ցանկությունն իրոք շատ զորավոր էր: Այդ ժամանակ Հռոմը աշխարհի քաղաքական և առևտությունն էր: Նա ցանկանում էր իրազործել Աստծուց տրված իր կոչումը՝ Բարի լուրջ քարոզելով իրեամերին և ոչ իրեամերին, ովքեր ապրում էին այս կարևոր քաղաքում:

Պողոսն ասաց, որ Բարի լուրջ

- Աստծուց զորություն է բերում (1:16)
- փրկում է բոլոր հավատացողներին (1:16)
- բոլոր մարդկանց համար է (1:16)
- մարդկանց արդարացնում է Աստծո առաջ (1:17)
- մարդկանց հավատքով Աստծո մեջ ապրելու ունակություն է տալիս (1:17)

## **Բարեփոխումների սկիզբը. Հռոմեացիներին 1:17**

Պողոսն ասաց, որ Ավետարանը կամ Բարի լուրջ ներառում է Աստծո զորությունը՝ հավատացողներին զորացնելու համար (1:16): Նա սա կապում է միայն հավատով ապրելու զորության հետ (1:17), որը մոտ 700 տարի առաջ խստացվել էր Ամբակում մարգարեի կողմից: «Արդարն իր հավատով պիտի ապրի» (Ամբակումի 2:4): Աստծո փրկությունը ստանալու հավատ, Աստծո արդարությունը ստանալու հավատ, Սուրբ Հոգու զորությունը ստանալու հավատ: Սա Աստծո օրինությունն է բերում հավատացյալներին և նրանց միջոցով՝ այլ մարդկանց, նոյնիսկ՝ ամբողջ ազգին:

Սու 2000 տարի բազմաթիվ հավատացյալներ են անոր պահել Պողոսի ուսուցումները: Ցավոր, ոմանք հալածվել են, նոյնիսկ՝ մահվան ենթարկվել՝ մերժելով հավատալ կրոնական սովորույթներին: Չատ ավելի մարդիկ Պողոսին հավատացին 16-րդ դարում, երբ բարեփոխումներ սկսվեցին Եվրոպայում, ավելի ուշ՝ Նոր աշխարհում և այլ զաղություններում: Մարտին Լյութերը Աստծուց հայտնություն է ստացել՝ կարողալով Հռոմեացիներին 17-րդ գլուխը. Քրիստոսին հավատալով է, որ ստանում ենք Աստծո արդարությունը, ոչ թե միայն բարի գործերով կամ սովորույթներով: Սա Լյութերի վաղ ուսուցումների կենտրոնում էր գտնվում, ինչպես նաև՝ Զան Կալվինի վաղ ուսուցումներում: Ցավոր, իրենք հետ վերադարձան իրենց որոշ իին սովորույթներին, բայց Սուրբ Հոգին օգտագործեց նրանց բարեփոխումներ սկսելու համար, որի հետևանքով այսօր կարող ենք ապրել որպես Նոր Կտակարանի եկեղեցի:

Դա կարևոր ժամանակ էր՝ նախքան հալածանքների սկսելը Հռոմի քրիստոնյաներին ճիշտ վարդապետությամբ հաստատելու համար:

Պողոսի գրքածքները գոյատեսեցին և այս վերջին օրերի մեջ կարևոր են բոլորին համար:

Այսօր էլ շատ մարդիկ չեն ցանկանում լսել Աստծո Խոսքը: Նրանք ատում են Աստծոն և ատում՝ Նրա ճշմարտությունը: Նրանք իրենց են վստահում և ոչ թե Աստծոն: Չեն ցանկանում թույլ տալ, որ Աստված իրենց կյանքի մեջ զա: Մեղքի պատճառն այն է, որ մարդիկ չեն հնազանդվում Աստծոն, կոնակ են դարձնում Նրան: «Արդարը հավատով պիտի ապրի»՝ հավատալով Աստծո Խոսքին (1:17):

Պողոսի թղթի մեջ սա շատ կարևոր համար է: Աստծո այս ճշմարտությունը Պողոսի Հռոմ այցելելու զիխավոր պատճառներից էր: Իր նամակի շարունակությունը հիմնված է այս ճշմարտության վրա: Այս Բարի լուրը «ցույց է տալիս, թե Աստված ինչպես է մարդկանց արդարացնում Իր առաջ» (1:17):

Պողոսն այս թուղթը գրել է Կորնիքոսից, հետո նա Աթենքում էր: Աթենքը Հռոմի նման մեծ քաղաք էր: Եվ Հռոմի նման այնտեղ էլ շատ շար մարդիկ կային: Պողոսը քարոզեց Աթենքում, քայլ շատ թիշ մարդիկ հավատացին: Աթենքի մարդիկ կարծր սիրու ունեին: Նրանք Աստծո առաջ արդար չեն: Նրանք մեղավոր են և Աստծոն չեն հավատում: Պողոսը ցանկանում էր, որ Հռոմի մարդիկ բարյացակամությամբ ընդունեին իրեն, որ ավելի շատ մարդ հավատար Հիսուս Քրիստոսվ Աստծո Բարի լուրին: Նա ցանկանում էր, որ հավատացյալներն իմանային, որ Աստծո առաջ կարող են արդարանալ հավատով: Հիսուս Քրիստոսում հավատքի բարի լուրը սա հնարավոր է դարձնում (1:17): Ահա թե ինչո՞ւ այս համարում Պողոսը մեջբերում է արել Ամբակում 2:4-ից. «Արդարը հավատով պիտի ապրի»: Նա ցանկանում էր լավ արդյունքների հասնել, եթե Ավետարանը տաներ Հռոմ (1:13): Ահա թե ինչո՞ւ էր այսպես զգուշորեն պատրաստում իր այցը:

## Խոսի՛ր սրա մասին

1. Ինչո՞ւ էր Պողոսը ցանկանում այցելել Հռոմի հավատացյալներին (1:5, 14–16):
2. Նա ինչպե՞ս էր մարդկանց պատրաստում իր այցի համար (1:8–16):
3. Պողոսը նախ ի՞նչ ասաց նրանց հավատը զորացնելու համար (1:6, 7):

## Հռոմեացիներին 1:18–32

### ԱՍՏԾՈ ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՋԻ ՆԿԱՏԱԱՐ

Աստված մարդկանց ցույց է տալիս, որ Ինքն Աստված է (1:19–20): Բայց շար մարդիկ չեն ցանկանում հավատալ: Նրանք մերժում են հավատալ, որ Նա է

աշխարհը ստեղծել, որ Նա սիրում ու հոգ է տանում նրանց համար (Գործ  
Առաքելոց 14:15-17): Նրանք չեն ցանկանում Աստծուն պաշտել:

Սարդիկ զիտեն արարչագործության իրաշալիքների մասին: Նրանք  
կարող են տեսնել և վայելի այն ամենը, ինչ Աստված ստեղծել է (Գործ  
Առաքելոց 17:24-27), բայց շնորհակալություն չեն հայտնում Նրան այն  
բարիքների համար, որ Նա մեզ տալիս է (Հռոմեացիներին 1:21):

Աշխարհի արարչագործությունից սկսած հնարավոր է ճանաչել Աստծոն  
հատկությունները: Այս հատկությունները կարելի է տեսնել այն ամենում, ինչ  
Նա ստեղծել է (1:20):

Այստեղ Պողոսը խոսում է Արարիչ Աստծո նկատմամբ ունեցած իր հավատի  
մասին: Նրա արարչագործությունը նկարագրված է Սուրբ Գրքում (Ծննդոց  
1): Բայց մեղքը բարկացնում է Աստծուն (1:18):

Աստված միշտ մի ճանապարհ տալիս է մեզ՝ Իր մոտ վերադառնալու,  
բայց շատերն ասում են «ՈՇ, ես չեմ ցանկանում ճանաչել Աստծուն»: Նրանք  
Աստծուց հեռանում են ու զնում չափ ետքից (Ծննդոց 8:21):

Աստված թույլ է տալիս, որ նրանք իրենց ճանապարհով գնան  
(Հռոմեացիներին 1:24, 26): Նրանք չեն ցանկանում Աստծո մասին մտածել,  
Աստված էլ թույլ է տալիս, որ նրանց մտքերը խավար մնան: Պողոսը խոսեց  
նրանց գործած սխալ արարքների մասին (1:23-31):

Որո՞նք էին այդ սխալները.  
Ընտրեցին հավատալ ստիճ՝ փոխանակ հավատալու այն ամենին, ինչ  
Աստված է ասում, որ ճշմարիտ է (1:25)

Սարդկանց ձեռքով շինված կուրքերի էին պաշտում (1:23)  
Սեռական հարաբերությունները սխալ ձևով էին օգտագործում: Սա դեմ է  
տղամարդկանց և կանանց համար Աստծո ծրագրին և կարող է տանել  
լուրջ իիվանդության կամ մահվան (1:27)

Անում էին այն ամենը, ինչ Աստծո աշքում սխալ էր (1:29)

Նրանք, ովքեր չեն հնազանդվում Օրենքին, անսուրբ են (Ղևոնցիներին  
18:1-30): Պողոսը սա զիտեր այն օրենքից, որ Աստված էր տվել Սովուսին: «Նրանք զիտեն, որ Աստված ասում է, որ ովքեր այսպիսի բաներ են անում,  
մահանալու են» (1:32):

Աստծո օրենքին չինազանկելու պատիժը մահ է՝ հավիտենական կյանքի  
փոխարեն (Հռոմեացիներին 6:23):

Պողոսը երեք անգամ զգուշացնում է, որ երր մարդիկ շարունակ մերժում  
են Աստծուն, ի վերջո Աստված էլ նրանց կմերժի (1:24, 26, 28): Նոյնիսկ,  
երր զիտեն Աստծո ճշմարտությունը (1:21), նրանք չեն մտածում, որ դա  
կարևոր է (1:28): Նոյնիսկ, երր զիտեն, որ մեղքը մահվան է առաջնորդում,  
չեն դադարում մեղք գործելուց, այլ ուրշներին էլ քաջալերում են մեղք գործել  
(1:32): Առանց Աստծո փրկությունը ստանալու՝ մեր մեջ գտնվող մեղքը մեզ  
ավելի լուրջ մեղքի կտանի և որիշների էլ սայրաքանակ պատճառ կդառնա:

Պողոսն իր թղթի այս հատվածը տիրությամբ է պավատում: Նա այսպես  
արեց բոլորին Աստծո առաջ նոյն մակարդակին իշեցնելու համար: Պեսոք է

պատրաստ լինենք ընդունելու, որ բոլորս էլ մեղանչել ենք և արժանի ենք Աստծո պատժին: Սա վերաբերվում է հրեաներին և ոչ հրեաներին: Սա վերաբերվում է եկեղեցու առաջնորդներին և բոլոր հավատացյալներին այն ժամանակ և այժմ:

## **Խոսի՞ր սրա մասին**

1. Ինչպէ՞ս կարելի է իմանալ, որ Աստված գոյություն ունի (1:20):
2. Ինչո՞ւ է Աստված քարկացած մարդկանց վրա (1:18):
3. Ի՞նչ առարկություն ունենք Աստծուն չփրելու համար (1:20):
4. Ի՞նչ է պատահում, եթե Աստծուն շնորհակալություն չենք հայտնում (1:21):
5. Ինչո՞ւ է Պողոսը 1-ին գլուխն ավարտում վատ և ոչ թե լավ լուրով:

## **Այժմ կարդա՞՛ Հռոմեացիներին 2:1–29**

### **ԱՍՏՎԱԾ ԱՐԴԱՐԱՑԻՈՐԵՆ Է ՄԵՂՋԸ ԴԱՏՈՒՄ**

Այժմ Պողոսը խոսում է այն հավատացյալների մասին, ովքեր դատում են որիշներին նրանց մեղքի համար: Պողոսն ասաց. «...Չես կարող արդարանալ, ով մարդ, ով էլ որ լինես ...» (1:20, 2:1): Պողոսն ասաց. «Նեղություն և տառապանք ամեն մի մարդու հոգու վրա, ով չարիք է զործում (2:9), բայց փառք, պատիկ և խաղաղություն բոլոր նրանց, ովքեր բարին են զործում» (2:10):

Ինչո՞ւ է սա ասում: Պողոսն ասում է. «...Ուրիշին ես դատում... նոյն բաներն ես անում» (2:1): «Մի՞թե կարծում ես, թե կազատվես Աստծո դատաստանից» (2:3): Հետո ավելացնում է. «Դու չես զղում քո մեղքերի համար» (2:5):

Պողոսն այս խիստ ուսուցումն է տալիս, քանի որ հրեաները մտածում էին, որ իրենք ավելի լավն են, քան մյուս բոլոր մարդիկ և ազգերը: Նրանք մտածում էին, որ իրենք առանց մեղքի էին: Հիսուսը զգուշացրեց. «Մի՞ դատեր (քննադատեր, մեղադրեր), որ չդատվեր» (Մատթեոս 7:1):

Օրք մոտենում է, եթե Աստված բոլորին դատելու է (2:5): Նա ամբողջ մեղքը դատելու է: Նա արդարությամբ է դատելու (2:2, 5, 6, 11): Աստված մարդկանց դատելու է իրենց զործերի համեմատ (2:6–9):

Բայց Պողոսը մեզ զգուշացնում է, որ ուրիշներին իրենց մեղքերի համար չդատենք: Միայն Աստված կարող է դա անել, քանի որ մենք ինքներս մեղավոր ենք: Մենք պետք է սովորենք ատել մեղքը, բայց սիրել մեղավորներին, որ նրանք կարողանան Աստծո մոտ վերադառնալ: Պետք է օգնենք նրանց, որ աղորեն Հիսուսին իրենց մեղքերի թողության համար:

Հրեաները մտածում էին, որ Աստծո օրենքին հնազանդվելը կփրկի իրենց Աստծո բարկությունից և մեղքի պատժից: Բայց բավարար չեր, որ շաբար

օրը լսեին, թե ինչպես են կարդում Օրենքը: Օրենքը նրանց չէր փրկում պատժից: Պողոսն օգնում է հրեա առաջնորդներին հասկանալ, որ բոլորն են մեղանչել, բոլորը օրինազանց են (2:23): Բոլորը Աստծո դատաստանից և պատժից փրկության կարիք ունեն Իր Որդու՝ Հիսուսի՝ մեզ համար արած զոհաբերության միջոցով: Այսօր էլ սա ճշմարիտ է: Բոլորս՝ ներառյալ հավատացյալները, եկեղեցու առաջնորդները, մեղսունակ մարդիկ ենք:

## ԱՍՏՎԱԾ ԴԱՏՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Պողոսը շարունակում է խիստ ուսուցում տալ, որ դժվար է ընդունել: Նա ասում է, որ նոյնամիսկ Աստծո ժողովուրդը պետք է դատվի: Հրեաները հպարտանում են, որ Աստծո ընտրյալ ժողովուրդն են: Բայց Աստված պատժելու է նրանց, քանի որ ճիշտն իմանալով՝ շարունակում էին մեղք գործել:

Առաջին դատվողները լինելու են հրեաները (2:9, 10), որովհետև նրանք առաջինը ստացան Բարի լուրը: Աքրահամի օրերում 2000 տարի առաջ նրանք կանչվեցին հավատալու Եղովա Աստծուն և հավատով ապրելու:

Հրեաները փոքրած էին պահել Օրենքը՝ ցույց տալու, որ իրենք Աստծո ժողովուրդն են, ինչպեսև՝ Աստծո առաջ շնորհ գտնելու համար: Նրանք հպարտանում էին իրենց օրենքներով (2:17–24), բայց Օրենքի իսկական իմաստը նրանց սրտում չէր (2:25–29): Նրանք թվատվել էին՝ որպես նշան ցույց տալու, որ իրենք Աստծո ժողովուրդն են, բայց Աստված ցանկանում էր, որ ոչ միայն արտաքինով փոխվեն, այլ նաև ներքնապես՝ իրենց սրտում:

Այս համարներում Պողոսը ցույց տվեց, որ

- Աստված բոլորին դատելու է մեղքի համար (2:3)
- Աստված բոլորին նոյն ձևով է դատում (2:9–11)
- Աստված արդար է, որ բոլորին հավասարապես է դատում (2:2, 5, 11)
- Աստված ակնկալում է, որ բոլոր մարդիկ անեն այն, ինչ ճիշտ է (2:12–16)

Այսպիսով հրեաները, թեև Աստծո օրենքներն ունեին, նոյնքան մեղսունակ մարդիկ են, որքան այլ ազգերին պատկանող մարդիկ (2:9): Օրենքը չփոխեց նրանց սիրութը:

Աստված ցանկանում է, որ բոլոր մարդիկ ընդունեն իրենց մեղքն ու ապաշխարեն: Սա նշանակում է, որ նրանք Աստծուն պետք է դառնան, հնագանովեն Նրան, այլև ետ չնայեն իրենց իին կյանքին: Նա չի ստիպում մարդկանց ապաշխարել: Նա պատրաստել էր ապաշխարելու և Իր մոտ վերադառնալու ճանապարհը: Նրանք, ովքեր չեն լին Աստծուն և չեն ապաշխարի, կպատժվեն (2:5–6): Պողոսն ասում է, որ սա վերաբերվում է բոլոր մարդկանց, ներառյալ նրանց, ովքեր հավատում են Աստծուն և մտածում են, որ փրկված են: Աստվածավախ մարդկանցից շատերն Աստծուն բավական լավ չզիտեն հասկանալու, թե ինչքան մեղապոր են իրենք իրենց ներսում:

Աստված հավիտենական կյանք է տալիս նրանց, «ովքեր բարի գործերի մեջ հարատելով, փառք, պատիվ և անմահություն են որոնում» (2:7), բայց մարդիկ



## Հռոմեացիներին 2:17–29 Հքեաները և Օրենքը

Պողոսն ասաց իրեա հավատացյալներին, որ դադարեն հպարտանալ իրենց ով և իմ չինելով՝ ղեկավար, նշանավոր անձ, ուսուցիչ: Այդ ամենի փոխարեն նա նրանց ասաց, որ իրոք հոգ տանեն և համբերատար լինեն հավատի մեջ տկար եղողների, խավարում քայլող կույրերի, մանկամիտների ու տիհասների\*\* հանդեպ:

Բոլոր քրիստոնյաները, ովքեր սովորում են ճշմարտությունը, նախ կարիք ունեն իրենց սովորեցնելու (2:21): Նրանք պետք է գործնականորեն կիրառեն այն, ինչ քարոզում են: Նրանք պետք է սեր ցոյց տան այն մարդկանց, ում դժվար է սիրել: Առանց սրտի փոխվելու նրանք չեն իմանա, թե որն է Աստծո օրինությունն իրենց համար, և նաև ուրիշների համար օրինություն չեն լինի: Նրանք չեն կարողանա կյանքի խնդիրները հաղթահարել:

Հետագայում Պողոսը զարմացրեց իրեա հավատացյալներին՝ ասելով, որ Աստծո առաջ ոչ իրեա հավատացյալները հավասար են իրենց: Հքեաները թվատության նշանն ունեն՝ ցոյց տալու, որ իրենք Աստծո ընտրյալ ժողովուրդն են: Բայց իրականում կարևոր է սրտի ներքին փոփոխությունը: Սա է, որ հաճեցնում է Աստծոն (2:29): Սա մեր փրկության նպատակն է: Ահա, թե ինչու Հիսուսն ասաց. «Դու պետք է վերստին ծնվես» (Հովհաննես 3:3,7): Բավարար չէ Աստծոն հավատացող կրոնասեր մարդ լինելը:

Խասեր են և ընտրում են չարի ճանապարհը (2:8): Սա ճշմարիտ է և իրեաների, և ոչ իրեաների համար: Պողոսն այս ամենն ասաց, որ բոլոր հավատացյալները հասկանան, որ բոլորն էլ մեղանչել են:

Աստծո օրենքներին հնազանդվելը լավ է, բայց՝ ոչ բավարար: Բոլոր հավատացյալները պետք է խնդրեն, որ Աստված փոխի իրենց սիրտը: Սուրբ Հոգին դա կանչի: Սա Նրա գործն է (2:29): Պողոսն ասաց նրանց. «Եթե դու հնազանդվես Աստծո օրենքի բոլոր կետերին, մարդիկ կարող են գովել քեզ, բայց Աստված կգովի քեզ միայն, եթե դու փոխանակ ես ներսից»:

Պողոսը նրանց պատրաստում էր այն ամենի համար, որ ցանկանում էր սովորեցնել 3-րդ գլխում՝ միայն Հիսուս Քրիստոսին վստահելով փրկվելու մասին:

Պողոսը տխուր էր, քանի որ իրեա առաջնորդներն իրենց փրկության համար վստահում էին Օրենքին: Բայց ավելի էր տխորում, եթե տեսնում էր, որ նրանք վատ օրինակ էին ծառայում իրենց հետևորդներին (2:23, 24): Մենք էլ պետք է զգույշ լինենք անելու այն, ինչ ճիշտ է, որ մարդիկ մեր պատճառով «Աստծո անունը չհայհոյեն» (2:24): Եկեղեցու առաջնորդներն այսօր պետք է հասկանան Պողոսի այս ուսուցումը:



## Խոսի՞ր սրա մասին

1. Ի՞նչ է պատահում, եթե ուրիշներին դատում ենք (2:1, Սատթես 7:1–5):
2. Հքեաներն ինչո՞ւ էին պարծենում (2:17–20):
3. Պողոսն ինչո՞ւ ասաց, որ իրեա առաջնորդները սխալ են (2:21–24):

 **Նյոթ՝ մտածելու համար.** Պողոսն ի՞նչ է ասում, որ այսօր մեզ ուղղված Աստծո պատգամն է:

## Այժմ կարդա՛ Հռոմեացիներին 3:1–20

### **ՔՈՂՈՐՉ ՄԵՂԱՆՉԵԼ ԵՆ, ՈՉ Ոք ԱՐԴԱՐ ՉԵ ԱՍՏԾՈ ԱՌԱՋ**

Պողոսը դատում էր հրեա հավատացյալներին իրենց փրկության համար Օրենքին վստահելու և իրենց մեղսալի բնույթը չընդունելու համար: Աստված նրան այս մեծ հասկացողությունն էր տվել: Յ-րդ գլխում Պողոսը փորձում է հրեա հավատացյալներին օգնել, որ ավելի լավ հասկանան Աստծուն հավատալու մասին: Նա բացատրում է, որ բոլորն են մեղանչել, ներառյալ՝ իրեաները (3:23):

Պողոսը հարցրեց. «Ի՞նչ առավելություն ունի հրեան» (3:1): «Չառ է ամեն տեսակետով»: Սիամ նրանց տրվեց Աստծո ճշմարտությունը, արարշագործության պատմությունը և աշխարհի նպատակը, Արքահամին տրված խոստումները, Աստծո պատվիրանները, Նրա մարգարեությունները և խոստումները: Հրեաներից եկավ Տեր Հիսուսը: Հիսուս Քրիստոսի ավետարանն օրինություն է բերում ամեն ազգի:

Հրեաներն ունեին Աստծո կողմից Մովսեսին տրված Օրենքը (Ելիշ 20): Օրենքը «ինենց Աստծո Խոսքն է» (3:2): Աստծո ճշմարտությունը նրանց էր տրվել գնահատելու և պահելու համար: Դա հայտնություն էր Աստծո սրտից:

Բայց Օրենքն ապացուցում է, որ ոչ ոք արդար չէ Աստծո առաջ (3:10): Պողոսն ասում է, որ բոլոր մարդիկ սիսալներ են գործել: Հրեաները մեղավոր են, ոչ հրեաները մեղավոր են: Տարբերություն չկա հրեաների և ոչ հրեաների միջև: Ոչ ոք չկա, որ արդար է Աստծո առաջ (Սաղմու 14:1–3): Բոլոր հավատացյալները մեղսունակ են, նոյնիսկ՝ ամենանվիրվածները: Մենք բոլորս նոյն դասը պետք է ստորենք:

Հետո Պողոսը խոսեց ընդհանուր սիսալի մասին: Որոշ մարդիկ ասում էին՝ ոչինչ, եթե մեղք գործեն, քանի որ Աստված միշտ կների իրենց: Հետո ասում էին. «Եկեք ավելի մեղք գործենք, որ Աստված կարողանա մեզ ներել»: Սա սիսալ ուսուցում է: Քրիստոնյաները չեն հավատում սրան: Մարդիկ, ովքեր այսպես են խոսում, սուտ են խոսում (3:8): Ախալ վարդապետություն է, եթե ասում ենք. «Չարիք գործենք, որ բարին գա»: Այսպիսի քանի ասողները չեն հասկանում Աստծոն, քանի որ Աստված պետք է ամբողջ մեղքը դատի:

### **ՀԱՍԿԱՆԱԼ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հետո Պողոսը ցույց տվեց, որ մարդիկ ծննդից սկսած Աստծուն չունեն իրենց կյանքում (3:10–12): Նրանք Աստծուն են նայում առանց հասկանալու: Այդ

պատճառով Աստծոն փրկության կարիքն ունեն (3:13–18):

Պողոսը մեջբերումներ է անում Սուրբ Գրություններից (Սաղմոսներ, ժողովող, Եսայի): Նա խոսում էր հրեաներին, ովքեր փորձում էին պահել այն Օրենքը, որ Աստված Սովուսին էր տվել (3:19): Օրենքը մեզ չի կարող արդարացնել Աստծոն առաջ: Բացարձակապես, ոչ: Օրենքը մեզ մեր մեղքն է ցույց տալիս (3:20):

Պողոսը սա ասաց հրեաներին օգնելու հասկանալ այն, իմ ասել էր 23-րդ համարում, որ բոլորը մեղք են գործել: Պողոսը ցանկանում էր նրանց հեռու առաջնորդել իրենց բոլոր ավանդույթներից ու սիսալ դաշտանքից: Մենք բոլորս կարիք ունենք հասկանալու իր ուսուցումները, որ Աստծուն հավատալը, առանց ներքնապես փոխվելու, մեզ չի փրկի կրոնական օրենքներին ու ավանդույթներին հնագանդվելը մեզ չի փրկի

Քրիստոնյա ծնողներ ունենալը մեզ չի փրկի :

Մենք պետք է միայն Աստծուն վստահենք և հավատով ապրեն՝ յիմանալով, որ Նա փրկում է մեզ, որովհետև Քրիստոսը մեր փոխարեն մեռավ: Հիսուսն ասաց. «Քննեցեք Գրեթը, քանի որ կարծում եք, թե դրանցով հավիտենական կյանք ունեք, և դրանք են, որ իմ մասին վկայում են: Եվ դուք Ինձ չեք գալիս, որ կյանք ունենաք» (Հովհաննես 5:39, 40):

Աշխարհում բոլորը կարիք ունեն իմանալու, որ իրենք մեղավոր են (3:19): Պողոսն ասում է, որ Աստված սա մեզ ցույց է տալիս Օրենքի միջոցով (3:20): Յուրաքանչյուրը կարիք ունի Աստծոն առաջ արդարանալու և հավիտենական կյանքի իր պարզեր ստանալու: Զգետք է քույլ տամք, որ կանոններն ու ավանդույթները խանգարեն մեր փրկության ուրախությանը:

## **Խոսքի սրա մասին**

Հրեաներն ի՞նչ ունեին, որ ուրիշները չունեին (3:2):

Արյոն՝ կրոնին հետևող մարդիկ ուրիշներից լավն են (3:9):

Աստված ինչո՞ւ Օրենքը տվեց (3:20):

 **Նյութ՝ մտածելու համար.** Բացատրի՛ր, թե կրոնի ավանդույթներն ու սիսալ վարդապետությունն ինչպե՞ս կարող են խանգարել մեր փրկությանը և հավատին:

## **Հռոմեացիներին 3:21–31**

### **ՄԵՆՔ ԱՐԴԱՐԱՑՎԱԾ ԵՆՔ ԱՍՏԾՈ ԱՌԱՋ**

Պողոսն այժմ ամեն բան շատ պարզ է դարձնում բոլոր հավատացյաների համար: Հրեաները մտածում էին, որ իրենք ապահով էին, եթե պահեին Սովուսի օրենքը: Նրանք Աստծոն ժողովուրդն էին: Իրենց ուսուցիչներն իրենց սովորեցնում էին, որ մյուս բոլոր ազգերը դժբախտ իմարներ են առանց Աստծոն: Բայց Աստված ասում է, որ ոչ-ոք բավական լավը չէ երկինք



## Հռոմեացիներին 3:21-31 Աստծո փրկության ճանապարհը

Չո՞ մեղքերից փրկվելու միայն մեկ ճանապարհ կա: Պողոսն Աբենքի մարդկանց ասաց. «Հավատա՛ Տեր Հիսուսին և կփրկվես» (Գործը Առաքելոց 16:31): Հիսուսն ասաց. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը. ոչ մեկը Հորը չի գա, բայց Ինձանով» (Հովհաննես 14:6):

Ինչո՞ւ է այսպես: Այսպես է, որովհետև Աստված չի կարող ընդունել ոչ մի ավել և ոչ մի պակաս բան, բան Քրիստոսի մահը՝ վճարելու իմ և քո մեղքերի համար: Ոչ բարի կյանքը, որ մենք ապրում ենք, ոչ էլ բարի գործերը, որ մենք գործում ենք, մեզ չեն կարող ազատել մեր մեղքերից:


Այսպիսով, Աստված փրկությունը որպես ձրի պարզեց է առաջարկում տղամարդկանց և կանանց: Նա խոստացել է. «Ո՛վ Տիրոջ անունը կանչի՝ պիտի փրկվի» (Գործը Առաքելոց 2:21): Պողոսը գրել է. «Որովհետև շնորհով եք դուք փրկված հավատի միջոցով, և սա ոչ թե ձեզնից է, այլ Աստծո պարզեց է. ոչ թե գործերից, որպեսզի ոչ մեկը չպարծենա (Եփեսացիներին 2:8-9):»:

Այսինքն՝ Աստծո շնորհն է քեզ փրկել Քրիստոսին հավատալու պատճառով: Փրկությունը մեր բարի գործերի հետևանքով չէ: Այն Աստծո պարզեց է: Այն հիմնված չէ քո արած որևէ բանի վրա: Ո՛չ ոք չի կարող պարծենալ այն վաստակելու համար:

Հին Կոտակարանի Սուրբ Գրություններում տասը պատվիրանները մեզ մեղքն են ցույց տայիս: Աստծո մյուս օրենքները ցույց են տայիս, թե մեր մեղքն ինչպես պետք է պատժի: Քրիստոնյաները հավատում են, որ մեր փոխարեն Քրիստոսն է այլ պատիժը ստացել: Մենք ասում ենք, որ միայն Քրիստոսը կատարեց Օրենքի պահանջները:

Մենք Աստծո արդարությունն ենք ստանում, երբ հավատով ընդունում ենք այն, ինչին Քրիստոսը խաչի վրա հասավ մեզ համար (3:27): Իր միջոցով մենք կարող ենք ունենալ նոյն հատուկ հարաբերությունը, որ Նա ունի Իր Երկնավոր Հոր հետ: Քրիստոսի միջոցով մենք կիսում ենք Աստծո արդարությունը, իր բարությունը, իմաստությունը, սերը և հավիտենական կյանքը, հենց այնպես, ինչպես Արամը՝ նախքան մեղք գործելը: Սա հնարավոր է բոլոր նրանց համար, ովքեր հավատում են Քրիստոսին (3:26): Աստծո շնորհը բազավորում է նրանց կյանքում, ովքեր մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով ստանում են Աստծո արդարությունը (5:21): Ալերիփ՝ ա:

գնալու համար: Նա երկինք գնալու նոր ճանապարհ է մեզ ցույց տայիս, ոչ թե «Քրավական լավը լինելով» և Նրա օրենքները պահել փորձելով, այլ նոր ճանապարհով: Տարիներ առաջ այս գրվել է Սուրբ Գրություններում: Այս նոր ճանապարհը Հիսուսն է: Իր զոհաբերությունը մարդկանց փրկության Աստծո նոր ուխտն է (Կորնթացիներին 11:25): Աստված ասում է, որ մեզ կարդարացնի, արդար կիամարի, եթե հավատանք Հիսուս Քրիստոսին, որ



©GRN

**Բարի լուր փրկում են նրան, ով հավատում ու վստահում է Հիսուսին՝  
Աստծոն հետ իրեն հաշտեցնելու համար:**

Վերցնի մեր մեղքերը (3:22, 24, 25): «Պողոսը կրկնում է այս խոսքերը. «Քոլորը  
մեղանչեցին» (3:23): Հետո կրկնում է բոլորի համար բարի լուրը (3:24, 25):  
Քրիստոսի արյունը միակ քափությունն է մեղքերի համար (3:25):

Եթ Հիսուսը խաչի վրա մահացավ, Նա Աստծուն մոտենալու մի նոր և  
կենդանի ճանապարհ բացեց: Դա միակ ճանապարհն է (Հովհաննես 14:6):  
Սա հռոմեացիներին ուղղված Պողոսի թրի ամենակարևոր մասն է. Հիսուս  
Քրիստոսի միջոցով փրկության բարի լուրը բոլոր նրանց համար, ովքեր  
կիավատուն:

Եվ բարության շնորհիվ, Հիսուսի արյան զոհաբերությունը մեզ ազատում  
է մեր մեղքերից: Դա մեր արած որևէ բանի պատճառով չէ: Այն ձրի պարզ է  
նրանց համար, ովքեր վստահում են Հիսուսին: Փա՛ռ Աստծո: Եվ նրանք,  
ովքեր հավատում են, միայն Աստծո շնորհով ունեն հավիտենական կյանք  
Աստծո հետ (Հովհաննես 5:24):

## ՀԻՍՈՒՍԻ ԱՐՅԱՆԸ ՀԱՎԱՏԱԼՈՎ

Այս ձրի պարզել ե՛ հրեաների, և՛ ոչ հրեաների համար է: «Ում (Հիսուսին)  
Աստված նախասահմանեց, որ Իր թափած արյամբ քափություն լինի նրանց,  
ովքեր կիավատան իրեն» (3:25): Սա նշանակում է, որ Աստված Հիսուսին  
ուղարկե՝ մեր պատիժը վերցնելու: Մենք՝ մեղավորներս, պեսոք է

մահանայինք, բայց Հիսուսը մեր փոխարեն մահացավ: Նա մահացավ ամբողջ աշխարհի համար: Եվ Նրա արյան մեջ հավատ ունենալով՝ Աստված մեզ փրկում է մեր մեղքերի համար պատժելուց (3:25): Քանի որ Հիսուսը մեր փոխարեն մեռավ, Աստված ներում է մեղավորին, ով հավատում է Հիսուսին և հեռանում իր մեղքերից: Աստծո ամբողջ պատիժը թափվեց Հիսուսի վրա: Սա Նոր Շանապարհն է:

Հին Ծանապարհով մարդիկ կենացանի էին զոհաբերում: Մինչ թափում էին կենացանու արյունը՝ նրանք Աստծուն խնդրում էին, որ ներեր իրենց մեղքերը: Սակայն կենացանու արյունը չէր կարող նրանց մեղքը հավիտյան հեռացնել: Բայց այժմ, քանի որ Հիսուսի արյունը թափվեց մեզ համար, Աստված մեր բոլոր մեղքերը վերցնում է: Երբ հավատում ենք Հիսուսին, Նա այլս չի հիշում դրանք: Հիսուսի արյանը հավատալով՝ մենք փրկվում ենք մեր մեղքերի պատժից: Երբ ապաշխարում և հեռանում ենք մեր մեղքերից, Աստված մեզ ցոյց է տալիս Իր արդարությունը և ողորմությունը: Հիսուսը վճարեց մեր մեղքի գինը: Եվ մեր մեղքը հավիտյան հեռացվում է:

Այստեղ Պողոսը քրիստոնյաներին հիշեցնում է ավելի բաների մասին, որ նրանք պետք է իմանային Սուրբ Գորոյուններից (Երեմիա 31:31–34): Նա ցանկանում էր, որ նրանք իմանային, որ ավելի կարևոր է Հիսուսին վստահելը, քան` օրենքներին (3:28): Բայց նա ասաց, որ լավ է Օրենքն ունենալը: «Սենք հաստատում ենք Օրենքը» (3:31): Քրիստոսի մեջ ունեցած հավատը քրիստոնյաներին օգնում է ճշմարտությամբ, սիրով և ամբողջ հասկացողությամբ հնագանեցվել Օրենքին: Նրանք կարող են Օրենքով ապրել Քրիստոսի մեջ ունեցած հավատով:

Հիսուսն ասաց. «Մի՛ կարծեք, թե Ես եկա Օրենքը կամ Մարգարեներն ավերելու: Ավերելու չեկա, այլ՝ կատարելու» (Մատթեոս 5:17): Հետո Պողոսը Հռոմեացիներին 10:4-ում ասաց, որ Քրիստոսը կատարեց Օրենքը:

«Բարի լորի շնորհիվ (Հիսուս Քրիստոսի), Աստծո խոստումները ոչ իրեաների, ինչպես նաև իրեաների համար են: Երկու խմբերն էլ չի մարմնի մասերն են (Հիսուս Քրիստոսի եկեղեցու): Նրանք քաջնեկցում են խոստումը: Դա նրանց է պատկանում, քանի որ նրանք Հիսուս Քրիստոսին են պատկանում» (Եփեսացիներին 3:6): Սա նշանակում է, որ Հիսուսի միջոցով Աստծո խոստումները բոլորի համար են: Ոչ ոք դուրս չի մնացած, չէ՞: Մենք բոլորս Աբրահամի զավակներն ենք դառնում, հետևաբար, Աստծո խոստումները նաև ոչ իրեաների համար են:

Մենք հավատում ենք, որ իրեաները և ոչ իրեաները կարող են միմյանցից ստվորել և համաձայնվել, քանի որ բոլորս պատկանում ենք Հիսուս Քրիստոսին: Աստծո մեծ սիրո և շնորհի պատճառով Նա ներում է բոլորին, ովքեր հավատում են: Նա մեզ արդարացնում է Իր առաջ (3:24): Սեղանից ոչ-ոք չի կարող պարծենալ, որովհետև մեզանից ոչ-ոք չի կարող որեւ քան բավարար լավ անել ներմանը արժանանալու համար (3:27): Սուածին կամ երկրորդ կարգի քրիստոնյաներ չկան: Աստված ներում է բոլոր հավատացողներին (3:30): Բոլոր քրիստոնյաները հատուկ են Աստծո աշքում:

## Խոսի՛ր սրա մասին

1. Ո՞րն է Նոր Ծանապարհը, որ Աստված օգտագործում է Իր առաջ մեզ արդարացնելու համար (3:21, 22):
2. Վաստ մարդը կարո՞ղ է երկինք գնալ (3:23–25):
3. Մարդ ինչպե՞ս կարող է արդարանալ Աստծո առաջ (3:24, 26):

 **Նյութ՝ մտածելու համար.** Կարդա՛ Սաղմոս 14:3-ը, իսկ հետո Հռոմեացիներին 3:23 և 6:23-ը: Քո բառերով բացատրի՛ր այս ճշմարտությունները:

## Հռոմեացիներին 4:1–25

### Արքահամն արդարացավ Աստծո առաջ

Այս գլխում Պողոսը հրեա հավատացյալներին հիշեցնում է, թե Արքահամն ինչպես արդարացավ Աստծո առաջ: Աստված ասաց, որ նա արդար է, քանի որ հավատաց: Նա հավատով արդարացավ Աստծո առաջ (4:2–8): Ոչ թե թվակատության (4:9–12) կամ Օրենքը պահելու (4:13–17ա) շնորհիվ, այլ, որովհետև հավատաց Աստծուն (4:3): Պողոսը մեզ հիշեցնում է, թե Ծննդոց 15:6-ը ինչ է ասում Արքահամի մասին: Պողոսը մեզ հիշեցնում է, որ ոչ-ոք չի կարող Աստծո առաջ արդարանալ իր գործերով, քանի որ առիթ կունենա պարծենալու (4:2): Ոչ-ոք չի կարող պարծենալ: Աստված մեզ փրկում է Իր մեծ ողորմությամբ: Դու չես կարող սրա համար պարծենալ, «այն Աստծո պարզեն է» (Եփեսացիներին 2:8):

Այս կերպ Պողոսը նորից հրեաներին հիշեցնում է, որ Օրենքը պահելն իրենց չի արդարացնի Աստծո առաջ: Արքահամն արդարացավ Աստծո առաջ՝ Նրա խոստումներին հավատալով, Օրենքը տրվելուց տարիներ առաջ:

Դավիթ թագավորը զիտեր այս ճշմարտությունը, և 4:7–8-ում Պողոսն օգտագործեց Դավիթի խոսքերը սա մեզ ասելու համար (Սաղմոս 32:1–2): Պողոսն իր ընթերցողներին ապացուցեց, որ ներման, փրկության, արդարացման իր ուսուցումները հիմնված էին Աստծո խոսքի վրա: Այո՛, Աստված գրկաբաց ընդունում է զղացող մեղավորին, ով ապաշխարում և հավատում է: Արդարացումը, որ նշանակում է արդարանալ Աստծո առաջ միայն հավատով, նոր բան չի: Դա այնքան հին է, որքան Արքահամն ու Դավիթ թագավորը: Այն կարելի է տեսնել նաև Արելի և Նոյի դեպքում:

Զարմանալի չէ, որ Դավիթը երջանիկ էր: Աստված ներում է մեղքը, նույնիսկ հեռացնում է մեղքի անօրենությունը (Սաղմոս 32:5):

Պողոսը մեզ հիշեցնում է, որ երբ Աստված մեզ փրկում է հավատով, դա Նրա ձրի պարզեն է (4:4–5): Մենք ոչ արժանի ենք, ոչ էլ կարող ենք վաստակել այն, քանի որ բոլորս մեղավոր ենք:

Աստված Աքրահամին արդարացրեց Իր առաջ: Սա տեղի ունեցավ՝ նախքան նրա թվատվելը (4:10): Թղթատությունը հատուկ նշան էր, բայց այն Աքրահամին արդար չդարձրեց:

Աստված Աքրահամին արդարացրեց միայն հավատով: Այսօր մարդիկ, ովքեր Աքրահամի նման հավատով են մոտենում Աստծուն, դառնում են «Աքրահամի զավակները» (4:16): Քանի որ Աքրահամը հավատաց, Աստված նրան խոստացավ, որ նա բոլոր նրանց հայրը կլինի, ովքեր կկիսեն իր հավատը (4:13, 16): Աքրահամը Քրիստոսի մեջ բոլոր հավատացյալների հայրն է, որովհետև նա ցույց տվեց հավատի ճանապարհը, որը մեզ արդարացնում է Աստծո առաջ:

Աստծո հետ մեր հարաբերությունն ամբողջական է դառնում Հիսուս Քրիստոսին հավատալով: Սա հրեաների, արաբների և ոչ հրեաների համար է, ովքեր ցանկանում են Եհովային՝ Աքրահամի Աստծուն, ճանաչել: Քրիստոսը Աքրահամին խոստացված սերմն է (սերունդը) (Գաղատացիներին 3:16, Ծննդոց 12:7, 13:15, 24:7):

Պողոսը որոշում է, որ **Հռոմի** հավատացյալների համար կարևոր է, որ այս հարցերը հստակորեն հասկանան, նախքան հաջորդ գիտում Աստծո շնորհի և Հիսուս Քրիստոսին հավատալով փրկության մասին խորանալը (5:2): Այստեղ տեսնում ենք Աստծո փրկության ծրագրի մասին Պողոսի զարմանալի խորաքափանցությունը: Հիսուսը Պողոսին հանդիպեց Դամասկոս գնալու ճանապարհին: Հետևաբար, հարուցյալ Փոկչի մասին իր իմացության լույսի ներքո մենք կարող ենք Վստահել Պողոսի Սուրբ Գրությունների հասկացողությանը: Պողոսին սովորեցրին Սուրբ Հոգին՝ Արարիայում, և վաղ եկեղեցու առաջնորդները (Գաղատացիներին 1:11–19):

Նրանք, ովքեր ցանկանում են քարոզել և եկեղեցիներ առաջնորդել, պետք է ժամանակ տրամադրեն աղոքքին, Աստվածաշունչն ուսումնասիրելուն և հաղորդակցվեն հավատացյալների հետ: Շատ երկրներում Աստվածաշնչյան դպրոցներ կան, որտեղ Սուրբ Հոգու առաջնորդությամբ տղամարդիկ և կանայք կարող են կրթվել:

Ե՛Վ հրեաները, և ոչ հրեաները պետք է Աստծուն գան՝ Քրիստոսին հավատալով: Այդ իմաստով Աքրահամը բոլոր հավատացյալների հայրն է, նա ցույց է տալիս հավատի ճանապարհը, որ մեզ տանում է Աստծո մոտ և արդարացնում Իր առաջ: Շահ թե ինչո՞ւ է Պողոսն ասում, որ Աքրահամը բոլորին հայրն է: Աստված ասել է, որ սա պատահելու է (4:17, Ծննդոց 17:5, Գաղատացիներին 3:29):

## ԱՔՐԱՀԱՄՆ Ի՞ՆՉ ՀՈՒՅՍ ՈՒՆԵՐ

Աքրահամը հավատում էր, որ Աստված կարող էր մահից կյանք առաջ բերել: Նա 100 տարեկան էր: Նրա մարմննը, ինչպես և Սառայի արգանդը «մեռած» էին (4:19): Աքրահամը և Սառան շատ ծեր էին որդի ունենալու համար, բայց Աստված նրանց որդին էր խոստացել: Աստված Աքրահամին ասաց. «Քո կին Սառան քեզանից որդի կունենա, և դու նրա անոնքը Բասհակ կրնես» (Ծննդոց 17:19):

Աքրահամը կարծես ուզում էր ասել «Անհնա՞ր» է, բայց իր հավատն Աստծուն ասաց «Այո՛»: Նա հավատում էր, որ Աստված մահից կյանք կարող է առաջացնել և Սառային որդի պարզեւել (Ծննդոց 21:1-7): Աստված պահեց այս խոստումը, և Խսահակը ծնվեց:

Երբ գայթակղվում ենք ասելով, որ մենք չենք կարող Աքրահամի հավատն ունենալ, պետք է ինքներս մեզ հիշեցնենք, որ Քրիստոսում ամեն ինչ հնարավոր է՝ Աստծո բարության և ողորմության շնորհիվ (2 Տիմոթեոս 1:9):

Հավատի պակասը (անհավատությունը) բոլոր մեղքերի պատճառն է, արմատն է, որովհետև այն չի փառափրում Աստծուն: Աքրահամը «հավատով գրացավ և Աստծուն փառք տվեց» (4:20): «Աստված ընդունեց Աքրահամին, որովհետև նա հավատաց, որ Աստված կարող էր անել այն, ինչ խոստացել էր: Այսպիսով, իր հավատն արդարացրեց նրան Աստծո առաջ» (4:22, Ծննդոց 15:26):

Սովորեն Աքրահամի մասին այս բաները գրեց ոչ միայն այդ ժամանակական համար, այլ նաև մեզ համար (4:24): Հիսուսն ասաց. «Ձեր հայր Աքրահամը ցանկացավ Իմ օրը տեսնել. և տեսավ այն և ուրախացավ» (Հովհաննես 8:56):

Հոռմեացիներին 4:25-ում Պողոսը մեզ ասում է, թե ինչո՞ւ էր անհրաժեշտ, որ Հիսուսը տառապեր և մահանար: Նրա միջոցով ենք ստանում մեր ներումն ու արդարացումը: Նա «մահացավ մեր մեղքերի համար», և Նա «մեզ արդարացնում է Աստծո առաջ»: Ներման և արդարացնան այս երկու մեծ օրինուրյունները (որ կոչվում է արդարացում) մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի փառահեղ գործն է: Սա Պողոսի Աստծո հրաշավի Բարի լուրի կենտրոնն է բոլոր նրանց համար, ովքեր հավատ ունեն հավատալու: Այն մեզ ունակ է դարձնում մեղքից ազատված հանդիպել Աստծուն: Պողոս առաքյալի այս համարը մեզ հիշեցում է այն բոլոր բաների մասին, որ ստացել ենք Քրիստոսի մեջ՝ նախքան մեզ տանելը 5-րդ և 6-րդ գլուխները՝ դեպի քրիստոնեական կյանքի ուրախություն:

## Խոսք՝ սրա մասին

1. Աստված ինչպե՞ս Աքրահամին արդարացրեց Իր առաջ (4:3):
2. Աքրահամին տրված խոստումներն ինչպե՞ս է, որ նաև մեզ համար են (4:16):
3. Ովքե՞ր են ներառված Աստծո խոստման մեջ (4:16, 17):
4. Աքրահամն ինչպե՞ս է մեր հայրը (4:17):
5. Հավատի դիմաց Աստված ի՞նչ է տալիս (4:5, 24):
6. Մեր հավատքն ինչպե՞ս է փառափրում Աստծուն (4:20):

## Նյութ՝ մտածելու համար. Չո բառերով բացատրի՛ր արդարացման վերաբերյալ քրիստոնեական ուսուցումը:

## Հռոմեացիներին 5:1–11

### ՄԵՆՉ ԽԱՂԱՊՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆՉ ԱՍՏԾՈ ՀԵՏ

Պողոսն այժմ քացատրում է արդարացումը, ինչ է պատահում, եթե Աստված ներում է մեղավորներին և արդար դարձնում Իր առաջ՝ (5:1-3): Հիսուսի միջոցով.

- Սենք հիանալի խաղաղություն ունենք Աստծոն հետ (տե՛ս նաև Կողոսացիներին 1:20)
- Աստծուն մոտենալու ճանապարհ ունենք (տե՛ս նաև Եբրայեցիներին 10:19)
- Սենք ստանում ենք Աստծոն շնորհը և ներփած ու մաքրված կանգնում ենք Իր առջև (տե՛ս նաև Եփեսացիներին 4:32)
- Նրա փառքը կիսելու համար մեզ հույս է տրված (տե՛ս նաև Հռոմեացիներին 8:17)

«Եվ ոչ միայն այսքանը, այլ նաև՝ պարծենում ենք նեղությունների մեջ» (5:3): Սա տարօրինակ խոսակցություն է: Եթե մենք Քրիստոսի համար ենք տառապում, մեր հույսը զորանում է: Տառապանքը մեզ զորացնում է (1 Պետրոս 5:10): Տառապանքը մեզ առաջ է մղում Քրիստոսին ավելի ճանաչելու համար (Փիլիպպացիներին 3:10):

Նա նրանց քաջալերում է հավատալ, որ «տառապանքը բոլորին ուժ է տալիս շարունակելու» (5:3): Այս հույսը մեզ երբեք չի հիանքափեցնում, քանի որ Աստված մեր սրտերը լցնում է Իր սիրով: Նա սա անում է Սուրբ Հոգու միջոցով, որ մեզ տրվեց (5:5): Սենք կարիք ունենք քաջալերելու, որ այս հույսն ածի: Հիսուսին հուսալը Աստծոն սերն է բերում մեր կյանքում: Աստված մեր սրտերի մեջ Իր սերն է թափում: Սուրբ Հոգին է այս զործն անում: Նա մեզ լցնում է Աստծոն մեծ սիրով: Երբեմն թվում է, թե հույսը պարզապես երազ է, բայց մեր հույսն Աստծուն է կախված, Ում կարելի է վստահել:

Սերիք հին կյանքում մենք հույս և զորություն չունենք: Հետո ճիշտ Ժամանակին Քրիստոսը մահացավ մարդկանց համար, ովքեր առանց Աստծոն էին (5:6): Եթե նույնիսկ լավն ենք, մենք չենք ակնկալում, որ ինչ-որ մեկը մահանա մեզ համար, բայց Աստված Իր մեծ սերը մեզ զույց տվեց՝ Քրիստոսին ուղարկելով մեզ համար մահանալու, եթե մենք վատ մարդիկ էինք (5:7-8):

Աստված Իր մեծ սերը թափեց մեզ վրա: Այժմ մենք վստահում ենք Իրեն, որ ավարտին հասցնի այն գործը, որը սկսել էր: Սեր հույսը ուժեղ և վստահ է: Նա՝ Հիսուսը, կարող է լիակատար և բոլոր Ժամանակներում փրկել նրանց, ովքեր Իր միջոցով գալիս են Աստծուն (Եբրայեցիներին 7:25):

Առանց Քրիստոսի...

- Մարդիկ չար են և չեն կարող ավելի լավ կյանքով ապրել, եթե նույնիսկ փորձեն (5:6)
- Մարդիկ դեռ վատ բաներ են անում (5:8)



## Հռոմեացիներին 5:3 Ուրախություն մեր տառապանքների մեջ

Պողոս ասում է, որ տառապանքը մեզ համար կարող է բարի լինել, քանի որ այն գորացնում է մեր հավատքը: Այսպես, մենք կարող ենք ուրախանալ մեր տառապանքների մեջ:

- Տառապանքի տարրեր պատճառներ կան.
- Տառապանք՝ մեր մեղքի հետևանքով
- Տառապանք՝ ուրիշների մեղքի պատճառով
- Տառապանք, որի պատճառը ընկած, քասի և Սատանայի կողմից դեկապարվող աշխարհում ապրելն է

Մենք կարող ենք ուրախանալ մեր բոլոր տառապանքների ժամանակ, եթե շարունակում ենք վստահել Աստծուն և ածել հավատքի մեջ: Այդ պատճառով է, որ Աստված քոյլ է տալիս տառապանքը, քանի որ այն հնարավորություն է տալիս, որ ավելի Նրա արդարությունը մեր մեջ գործի: Տառապանքը մեզ գորություն է տալիս առաջ զնալու (5:3): Այն առաջացնում է հոգևոր հասուն բնավորություն: Այն հավիտենական փրկության և հույսի հավատքն է կառուցում: Այն մեզ հնարավորություն է տալիս ապացուցելու Աստծու սերը, որ Իր Հոգու միջոցով մեր մեջ է բնակվում (5:5):

Լավ չէ տառապել և Աստծուն վստահել մերժելը: Աղոթքով և Իր Խոսքի միջոցով միշտ փնտրի՛ Աստծուն: Փառաբնության մեջ փնտրի՛ Աստծուն: Սովորի՛ քո տառապանքներուն ուրախանալ: Թույլ տուր, որ Աստված քո տառապանքը բարու համար օգտագործի: Աչք բաց՝ տեսնելու, թե ինչպես է Աստծո գորությունը գործում, որպեսզի դու հավատաս, ոչ թե «մարդկանց վկայության պատճառով, այլ՝ Աստծո գորության» (1 Կորնթացիներին 2:5): Մենք կարիք ունենք, որ մեր կյանքում Աստծո գորությունը գործի, որպեսզի կարողանանք տանել տառապանքը և հալածանքը: Այսպես կամենք Աստծո մեջ:

Տառապանք և հալածանք են տեսնելու բոլոր նրանք, ովքեր Քրիստոսին են հետևում (2 Տիմոթեոս 3:12): Երբ հավատում ենք Հիսուսին, ստանում Աստծո ներումը և պատրաստվում հետևել Քրիստոսի Հոգուն, ապա պատրաստ պետք է լինենք տառապելու և մահանալու (Մարկոս 8:34):

Հիսուսն ասաց. «Իմ պատճառով մարդիկ ատելու են ձեզ» (Մարկոս 13:13): Հնարավոր է տառապենք անարդար վերաբերմունքի պատճառով, հալածանքի, պատերազմի, տվի, տկար առողջության և շատ այլ չար բաների պատճառով: Բայց մենք պետք է հիշենք, որ Յահվե Աստվածը, ով ամենակարող և գորավոր է, ընտրեց մեզ Իր ներկայության մեջ քերել Իր Որդու տառապանքի միջոցով, Ում անունն է Հիսուս կամ Յեշուա, որ նշանակում է Փրկություն:

- Մարդիկ Աստծո թշնամին են (5:10)

Բայց Քրիստոսվ մեղավորներն Աստծո բարեկամներն են դասնում: Նրանք արդարանում են Աստծո առաջ (2 Կորնթացիներին 5:18): Աստված և մարդը

իրարից հեռացան: Երբ հավատում ենք Հիսուս Քրիստոսին, մենք դառնում ենք դեպի Աստված, և Նա դառնում է մեր բարեկամը:

Մենք արդարացվում ենք Աստծո առաջ: Մենք Աստծո կողմից ընդունվում ենք...

1. Աստծո շնորհի շնորհիվ (3:24)
2. Քրիստոսի գոհաբերության շնորհիվ (5:9)
3. Սեր հավատքի միջոցով (5:1)

Աստծո արդարությունը ձրի պարզե է բոլոր նրանց համար, ովքեր հավատում են Հիսուս Քրիստոսի բարի լուրին: Ալելուիա՝:

Արդարացած լինելով (Աստծո առաջ արդարացած լինելով) Նրա արյամք (Քրիստոսը մահացավ մեզ համար), կիրկվենք Աստծո բարկությունից (5:9, 1 Թեսաղոնիկեցիներին 5:9): Աստված բարկացած է «մարդկանց արած չար բաների» համար (1:18), բայց Քրիստոսը կանգնում է մեր և Աստծո սուրբ և արդար բարկության միջև: Այժմ, Հիսուս Քրիստոսին հավատալով, մենք այլև Աստծո հետ թշնամիներ չենք, այլ՝ բարեկամներ: Սուրբ Աստծո և հավատացող, մեղանչած մեղավորի միջև խաղաղություն կա: Որպես Աստծո զավակ՝ նա Աստծո հետ խաղաղության մեջ է:

Հիմա նա կարող է կանգնել Չորաց Աստծո ներկայության մեջ: Չներված մեղավորը չի կարող այդպես անել: Բայց Քրիստոսին հավատալով՝ մենք արդարացված ենք Աստծո առաջ, դառնում ենք արդար և արժանի՝ Նրա առաջ կանգնելու:

«Դա ամբողջ չէ: Մենք լի ենք ուրախությամբ...»: Երկնքում և երկրում մեծ ուրախություն է: Հրեշտակներն ուրախանում են (Ղուկաս 15:10), եկեղեցին ուրախանում է, և Աստծո շնորհով ներված մեղավորն է ուրախանում:

Ալելուիա:

## Խոսի՞ր սրա մասին

1. Ինչո՞ւ կարող ենք ակնկալել, որ կիսելու ենք Աստծո փառքի հոլյուք (5:2):
2. Ի՞նչ բարի բան է լինում, երբ տառապում ենք հանուն Քրիստոսի (5:3):
3. Աստծո սերը ինչպե՞ս է բափում մեր սրտերի մեջ (5:5):
4. Ինչքա՞ն մեծ է Աստծո սերը մեր նկատմամբ (5:8):

## Հռոմեացիներին 5:12–21

### ՄԱՀ ԱԴԱՍԻ ՊԱՏճԱՌՈՎ, ԿՅԱՆՔ ՀԻՍՈՒՏ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏճԱՌՈՎ

Այժմ Պողոսը հսկորեցնում է քրիստոնեական եկեղեցու մեկ այլ իհմք: Երբ Աղամք չինազանդվեց Աստծուն, մեղքը նրա կյանքի մեջ եկավ: Աստված դատեց Արամին: Քանի որ Արամքը մեղք էր գործել, նա պետք է մահանար:

Ակզրում Աղամը առանց մեղքի էր և առանց տարիքի: Մեղք գործելուց հետո նա սկսեց ծերանալ: Մեղքը և մահը փոխանցվեցին Աղամի զավակներին: Քոյոր մարդիկ մահանում են, որովհետև մեղսունակ են ծնվել (5:12):

Հռոմեացիներին ուղղված թղթի սկզբում Պողոսը մեզ ցույց տվեց, որ մեղսավոր մարդը չի կարող փրկել իրեն: Հետո Պողոսը ցույց տվեց, թե մեղսավորը ինչպիսի կարող է արդարանալ Աստծո հետ, որովհետև Քրիստոսը մահացել և մեռելներից հարություն է առել: Այժմ Քրիստոսի մեջ կյանքը փոխարինում է Աղամի մեջ եղող մահվան: Եթե կյանք կար, Աղամը մահ բերեց, իսկ Քրիստոսը կյանք բերեց, եթե միայն մահ կար: Մեր նոր կյանքը և ֆիզիկական, և՝ հոգևոր է:

Քանի որ մենք Աղամի զավակներն ենք, յուրաքանչյուր երեխա ծնվում է՝ իր կյանքում մեղքի արմատն ունենալով: Մինչ մենք մեծանում ենք, չենք կարող սխալներ չանել: Մեղքը արմատ է դնում հասնելով մեր կյանքի բոլոր մասերին: Որտեղ մարդիկ չգիտեն Աստծուն. մեղքի այս արմատը արագ է աճում: Նոյնիսկ, եթե ծնողներն աղոքում և երեխաներին Աստծոն մասին են ստորեցնում, մեղքը դեռ ներկա է: Մենք բոլորս Աստծոն ճանապարհով գնալու փոխարեն ցանկանում ենք մեր ճանապարհով գնալ: Եվ շոտով սկսում ենք ապրել որպես Աստծո թշնամիներ:

Ահա թե ինչո՞ւ քրիստոնյա ծնողների երեխաները չեն կարող քրիստոնյա



Եթե Աստված մեզ փրկում է պատժից, մեզ դնում է Քրիստոսին հետևելու և Սուրբ Հոգու զորությամբ ապրելու ճանապարհին: Քրիստոսը կանգնում է մեր և Աստծո պատժի միջև:

կոչվել, մինչև նրանք բավական մեծ չլինեն անհատապես Քրիստոսին հետևելու համար: Քրիստոսին իրենց կյանք ընդունելու որոշումը չի կարող իրենց ծնողների կամ քարեկամների կողմից կայացվել: Այս հարցում քրիստոնեությունը տարբերվում է աշխարհի մյուս բոլոր կրոններից: Ամեն մարդ ինքը պետք է որոշի Քրիստոսին հետևել և Աստծո առաջ արդար լինել: Եթե երեխան քրիստոնյա ծնողներ ունի, դա չի նշանակում, որ իրենք ել են քրիստոնյա ծնվում: Նրանք Աստծուն դառնալով՝ կարիք ունեն վերստին ծնվելու (Եգեկիել 18:23, Հովհաննես 3:7):

«Մեղքն աշխարհում կար... մահը թագավորեց...» (5:13–14): Մարդիկ Աստծո քշնամին են: Նրանք Աստծո կարիքն ունեն, որ Իր առաջ արդարացներ իրենց: Աստված մեզ բոլորին համար փրկվելու ճանապարհ պատրաստեց: Աստծո փրկության օրն եկավ, երբ Հիսուսը մեզ համար խաչի վրա մահացավ և երրորդ օրը հարություն առավ: Աստծո այս ծրագիրը հաղթեց մեղքին, մահվանը և մեր կյանքերի մեջ Սատանայի իշխանությանը: Այս ծրագիրը Աստծո սրտում կար նախքան աշխարհի ստեղծումը: Եվ Նա տվեց Մովսեսի օրենքը՝ ցոյց տալու, թե ի՞նչն է ճիշտ և սխալ, և ապացուցելու, որ մենք Փրկչի կարիք ունենք:

## ՄԵՂՋԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՄԵԶ ԻՐ ԱՏՐՈՒԿԸ ԴԱՐՁՆԵԼ

Մեղքը...

- Իմ սրտում թագավորող վատ թագավորի է նման (5:21):
- Իմ կյանքը կառավարող ստրկատիրոջ է նման (6:6, Հովհաննես 8:34):
- Նման է մի քշնամու, ով ցանկանում է կառավարել իմ միտքը (7:23): Նոյնիսկ երբ Աստված Մովսեսին Օրենքը տվեց, դրանից հետո ել մեղքը թագավորում էր: Եվ շարունակեց թագավորել աշխարհում: Մեղքը պետք է պատժվեր: Բայց միայն Քրիստոսը՝ մեր Փրկիչը, կարող է մեր կյանքում կորտել մեղքի գորությունը և թագավորությունը, երբ վստահենք Իրեն (6:6): Նա մեր փոխարեն պատիմք կրեց:

«Աղամք մեղքի առջև դուռ բացեց և այն ազատ արձակեց մարդկանց աշխարհում», - գրել է աստվածաշնչյան ուսուցիչ Ֆ.Ֆ. Բրուսը: Մեղքը այնքան վատացավ, որ Աստված ջրհեղեղ ուղարկեց՝ կործանելու բոլորին, բացի ուր հոգուց (1 Պետրոս 3:20): Նոյի ժամանակակիցները ոչնչացան ջրհեղեղի ժամանակ (Ծննդոց 7:21):

Արդյոք Նոյը մտածե՞ց. «Հիմա, որ մեղքը վերացել է, մի նոր, հիանալի աշխարհ կլինի»: Եթե այն՝ ապա Աստված պետք է հիշեցներ նրան՝ «մարդու սրտի խորհուրդը մանկուց չար է» (Ծննդոց 8:21): Նոյը ամեն ինչ նորովի սկսեց, բայց մարդու սիրտը չէր փոխվել: Աստված պատժեց աշխարհը, բայց մեղքը թագավորում էր մարդկանց սրտերում:

Աղամի մեղքը մահվան առաջնորդեց: Մարդու հոգին, այն մասը, որ

սիրում է Աստծուն, մահացավ: Մեղքի պատճառով մարդը հեռացավ  
Աստծուց: «Մեկի (Աղամի) հանցանքով շատերը մեռան» (5:15):

Թեև մեկ մարդու՝ Աղամի միջոցով մարդ փոխանցվեց մեզ բոլորին, շատ օրինություններ են մեզ գալիս երկրորդ Մարդու՝ Հիսոս Քրիստոսի միջոցով: Նա եկավ մեզ վրա օրինություններ բափելու (Հովհաննես 1:16): Իր օրինություններն ամբողջ երկիրն են լցում: Նրանք, ովքեր Վստահում են Հիսուսին, վայելում են Աստծո կյանքը՝ օրինությունների կյանքը (5:17), եթե նոյնիսկ տառապում են:

Քանի որ Աղամը մեղք գործեց, մեղքը բոլոր մարդկանց փոխանցվեց: Այդ պատճառով բոլոր մարդիկ ենթակա են մահվան: Քանի որ Հիսոս Քրիստոսը մեր փոխարեն մահացավ, բոլոր մարդիկ կարող են հավիտենական կյանք ունենալ: Մարդիկ, ովքեր Քրիստոսին ճանաչում են որպես իրենց Փրկչի, ովքեր հավատում և ընդունում են Աստծո բարության պարզելը, ստանում են հավիտենական կյանք (Հովհաննես 3:16): Աղամի անհնազանդությունը մեզ մեղավորներ դարձրեց, Քրիստոսի հնազանդությունը մեզ արդար է դարձնում (Փիլիպպեցիններին 2:8): Ալելոի՛ա:

**❸ Նյութ՝ մտածելու համար.** Եթե մեղքի պատճառով բոլոր մարդիկ մահվան ենթակա են, քո խոսքերով բացատրի՞ր մեզ փրկելու Աստծո ծրագիրը:

## ԱՍՏԾՈ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Օրենքը մարդու մեղքն էր ցույց տալիս: Մարդը չէր կարող դադարել սխալներ գործել, և այսպիսով, Օրենքն էր խախտում: Այն ցույց էր տալիս, որ նա մեղավոր էր և պետք է մահանար: Բայց մենք Օրենքից ավելին կարիք ունենք, որպեսզի անենք այն, ինչ հաճեցնում է Աստծուն:

Հետո, երբ մեղքը շատացավ, Աստծո բարությունն ավելի շատացավ (5:20): Աստված սիրում է մեզ՝ Իր արարածներին: Սուրբ Գրություններում տեսնում ենք, թե մեղքն ինչպես է շատանում մարդկության պատմության մեջ: Պատմության ընթացքում Աստված մեծացրեց Իր փրկության ծրագրի իմացությունը մարդկանց համար: Մենք սա տեսնում ենք այն հատվածների միջոցով, երբ Նա խոսեց Աղամին, Արելին, Նոյին, Արքահամին, Մովսեսին և մարգարեներին: Հետո Աստծո փրկության ծրագիրն ամբողջությամբ բացահայտվեց Իր Որդու՝ մեր Փրկիչ Հիսոս Քրիստոսի կյանքում: Ժամանակների սկզբից Աստծո ծրագիրն էր, «որ ինչպես մեղքը բազավորեց մահով, այնպես էլ շնորհը բազավորի արդարության միջոցով՝ հավիտենական կյանքի համար, մեր Տեր Հիսոս Քրիստոսի միջոցով (5:21):

Պատմության մեջ Աստված շատ քայլեր է արել դեպի մարդ՝ մեղքի ազդեցությունը ոչնչացնելու համար: Աստված շատ քայլեր է անում դեպի մեզանից յուրաքանչյուրը, և հենց մի քայլ ենք անում դեպի Նա, Նա սիրով

պատասխանում է: Երբ մենք հնազանդվում ենք Աստծո խոսքին, Նա զորացնում է մեր հավատը: Մենք սկսում ենք հասկանալ, թե ինչքան մեծ, լայն և խորն է Իր սերը: Նա այն Աստվածն է, որ սիրում է բարի լինել մեր նկատմամբ (1 Պետրոս 5:10): Իր սերը լվանում է մեր մեղքը և առաջնորդում մեզ Իր արդարության թագավորությունը:

Աստված մեզ Իր Սուրբ Հոգին է տալիս, որ մեզ օգնի հնազանդվել Հոր Խոսքին: Օր օրի Նա մեզ օգնում է ճանաչել Աստծո ճանապարհները և այդ ճանապարհով քայլել (Գաղատացիներին 5:25): Երբ քայլում ենք Աստծո ճանապարհով, մենք ուրախություն ունենք, պաշտում և փառաբանում ենք Նրան: Իր արդարության և բարության մեջ աճում ենք, և որիշ մարդիկ տեսնում են մեր մեջ ապրող Հիսուսին (2 Կորնթացիներին 4:2):

Սեր կյանքում մեղքը թագավորելու փոխարեն Աստծո շնորհն է թագավորում (5:21): Այժմ Աստված թագավորում է մեր կյանքում հավատի, փառաբանության և սիրո միջոցով և ոչ թե կանոնների, զոհաբերության և պատժի միջոցով: Մենք այլևս ստրուկ չենք այս բաներին, այլևս մեղքի ծառա չենք:

## **Խոսի՛ր սրա մասին**

1. Սեղըն ինչպե՞ս աշխարհ եկավ (5:12): Այն ինչպե՞ս է ազդում մեր երեխաների վրա:
2. Սեղքը ի՞նչ վաս բան բերեց աշխարհ (5:12):
3. Ո՞վ է Աստծո բարությունը մեզ բերում (5:15):
4. Զրիեղեղը Նոյի ընտանիքի անդամների սրտերը փոխե՞ց:
5. Երբ Աստծո առաջ ճիշտ ենք, Աստծո բարությունն (շնորհն) է թագավորում: Ի՞նչ է պատահում: Ո՞վ է սա անում (5:21):

 **Նյուր՝ մտածելու համար.** Մենք ինչպե՞ս կարող ենք «կառավարել կյանքում»: Հիսուսն է թագավորում քո կյանքում: Ինչպե՞ս կարող ես դա իմանալ (5:17):

## **Հոռմեացիներին 6:1–14**

### **ՄԵՂՋԻՆ ՄԵՌԱԾ, ԿԵՆԴՐՆԵՐ՝ ՋՐԻՍՈՍՈՒՄ**

5:20-ում Պողոսն ասաց. «Որտեղ մեղքը շատացավ, շնորհն առավել ևս շատացավ»:

Նա հարցնում է. «Ուրեմն ի՞նչ ասենք, մնա՞նք մեղքի մեջ, որ շնորհը շատանա» (6:1): Պողոսը սա ասաց, քանի որ որոշ մարդիկ սխալ գաղափար ունեին: Նրանք մտածում էին, որ քրիստոնյան կարող է շարունակել սխալ քանի անել, քանի որ Աստծո շնորհը շատ մեծ է: Նրանք ասում էին, որ հավատացյալները կարող էին շարունակել մեղք գործել, քանի որ Աստված ներելու էր իրենց և փառավորվելու էր:

Պողոսը պատասխանեց. «Իհարկե, ո՞»: Երբ մենք քրիստոնյա ենք

դառնում, մեղքի գորությունը մեր կյանքից վերցվում է: Երբ մկրտվում ենք, դառնում ենք Հիսուս Քրիստոսի մի մասը: Զրում ընկղութելով՝ մկրտությունը նշան է Քրիստոսի մեջ մեր նոր կյանքի: Այն նոր սկիզբ է: Մենք ջրից դուրս ենք գալիս մեր նոր կյանքը սկսելու համար: Մենք մեռած ենք մեղքի համար և կենացանի Քրիստոսի մեջ (6:2–3): Աստված փոխում է ինձ, և ես փոխվում եմ Աստծո սիրո շնորհիվ: Աստծո սերը բավական մեծ է ներելու ամենավատ մեղքերը: Եվ Նրա գորությունը բավական մեծ է հաղթելու ամենավատ մեղքը: Հետևաբար, «մեղքն այլև չի հշխում մեր վրա», այլև կարիք չունենք մեղքով կառավարվելու:

Պողոսն ասում էր, որ ճշմարիտ հավատացյալը միանում էր Հիսուս Քրիստոսին, հետևաբար.

- Նրա մեռելներից հարություն առնելու շնորհիվ, Նա Հոգու մեջ մեզ նոր կյանք է տալիս (6:5, 8):
- «Մեղքն ծառա» լինելու փոխարեն, մենք ծառայում ենք Նրան (6:6):
- Մենք մեղքից ազատվում ենք սուրբ կյանք ապրելու համար: Մահը և մեղքը ոչ մի գորություն չունեն մեզ վրա (6:9):

Աստված ասում է, որ սա պատահում է, եթե հավատում ենք: Երբ հավատում ենք, մենք բաժնեկցում ենք Քիստոսի մահը (1 Կորնթացիներին 12:13). մահանում ենք մեր հին ճանապարհների համար և դառնում «կենացանի՝ Աստծո համար» (6:11, 2 Կորնթացիներին 5:17):

Մենք գիտենք, որ մեր հին կյանքը մահացել է (6:6): Երբ հավատում ենք Հիսուս Քրիստոսին, դա նշանակում է, որ մահանում ենք մեր հին վարքին, եթե չիմք կարող սխալներ չանել: Այդպիսի ապրելակերպն ավարտված է: «Սեր հին մարդը Նրա հետ խաչվեց» (6:6): Կյանքի նոր ճանապարհը սկսվել է, և մկրտությունը վկայում է սա մեր ընկերներին և ընտանիքին:

Պողոսը գիտեր, որ քրիստոնյաները ժամանակ առ ժամանակ դեռ մեղք են գործում: Բայց ցանկանում էր, որ իր ընթերցողներն իմանային, որ մեղքն այլև նրանց տերը չէ: Մենք նոր Տեր ունենք:

Պողոսը հետո մեկ այլ ուսուցում է տալիս, որը քրիստոնեության հիմքն է. «Նա մեռավ՝ մեղքի նկատմամբ մեռավ մեկընդմիշտ» (6:10), որ մարդիկ այլև իրենց սխալ ճանապարհներով չգնան: Մեղքի համար այլև ոչ մի զիհարերություն չի պահանջվում՝ Աստծուն հաճեցնելու համար:

## ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՆՇԱՆ

Պողոսը համարձակորեն պատվիրում է իր ընթերցողներին. «Այսուհետև քոյ մեղքը շրագավորի...» (6:12): Սուրբ Հոգուն «Այո՛» ասա և թո՛յլ տուր, որ Նա քեզ համար ընտրի ճիշտը: Թո՛յլ մի տվեր ձեր մարմնի որևէ անդամին սխալ բան անելու... քոյ ձեր մարմնի բոլոր մասերը Աստծուն հնազանդվեն: Հիսուսին ձեր բավակորը դարձրեք:

Քրիստոսը տառապեց և մեկ անգամ մահացավ փրկության իր գործն ավարտելու համար: Մեղքի համար մեր մեռած լինելը նույնպես պետք է



© GRN

**Մեղքը ցանկանում է մեզ սորվացնել: Մենք պետք է ընտրենք չսել Սատանային կամ գայթակղությանը: Սուրբ Հոգու զորությամբ մենք կարող ենք «ՈՉ» ասել հին կյանքին:**

ավարտված աշխատանք լինի: Պետք է հավատանք, որ մենք մեռած ենք մեղքի համար (6:11): Այդ հնազանդվեր հին չար ճանապարհներին (6:12): Պողոսն ասում է. «Այլ ձեր անձերն ընծայեք Աստծուն» (6:13):

Պողոսը մեզ ասում է, որ քրիստոնեական կյանքն այն է, որ անենք այն, ինչ Քրիստոսն է ասել այն ժամանակ, երբ ապրում էր այս աշխարհում: Այդ պատճառով մենք պետք է ուսումնասիրենք Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի կողմից գրված Ավետարանները՝ Հիսուսի մասին ավելի սովորելու համար: Մեր փափազը պետք է լինի Աստծուն փառաքանել, անել այն, ինչ Նա է ասում, աճելով պահի ու ավելի Հիսուսին նմանվել և Նրա ծառան լինել: Մեր հավատքը պետք է ակտիվ հավատք լինի: Մեր ձեռքերը, ոտքերը, միտքը Նրան ենք տալիս, որ Նա զործածի բարի զործեր անելու համար (6:13): Նա կարող ենք անել միայն այն ժամանակ, երբ թույլ տանք, որ Սուրբ Հոգին մեր մեջ բնակվի: Նա մեզ զորություն է տալիս Աստծո համար ապրելու (Գործը Առաքելոց 2:38):

Պողոսի հրահանգներ տալու պատճառներից մեկը վստահեցնելի է, որ իրեա հավատացյալները ազատված են և հին կյանքի մեղքից, և հին օրենքից (6:14): Նրանք պետք է ոչ մեղքի ծառա լինեն, ոչ Օրենքի: Նրանք պետք է առաջնորդվեն Օրենքով, բայց փրկությունը Քրիստոսի

քրիարերությանը հավատալու միջոցով է: Նրանք ազատվել են կրոնական հին ճանապարհներից և սովորույթներից, և Քրիստոսը նրանց կյանքում մեղքի վրա հաղորդյուն է տարել: Սա վերաբերվում է բոլոր հավատացյալներին:

## **Խոսի՞ր սրա մասին**

1. Ինչպե՞ս է Աստված մեզ ազատում մեր կյանքի մեղքի և մահվան գորությունից (6:6):
2. Քրիստոնյաներն ի՞նչ են անում՝ ցույց տալու, որ իրենք Հիսուսին են պատկանում (6:3–4):
3. Եթե մենք մեղքի ծառա չենք, քրիստոնյաների կյանքում ո՞վ պետք է քաղաքորի (6:12):
4. Եթե Հիսուսը մեր Տերն է, ի՞նչ պետք է անենք, եթե գայթակղվում ենք մեղքով (6:11–13):

**Նյոթ՝ նտածելու համար.** Քրիստոնյաներն ինչի՞ց են ազատվում: Ի՞նչ է նշանակում «Քրիստոսի ծառա» դառնալը (1:1):

## **Հորմեացիներին 6:15–23**

### **Մենք ազատ ենք դարձել Աստծո ծառան լինելու համար**

Ի՞նչ է փրկությունը: Փրկությունը մեղքից ներում և ազատում է: Պողոսը գրել է. «Քննչպես ձեր մարմինները ենթարկեցիք պղծությանն ու ամօրենությանը... նույնպես էլ հիմա ձեր անդամները ենթարկեք արդարությանը՝ սրբության առաջնորդելու» (6:19):

Առանց Աստծո մարդու համար հեշտ է մեղքի մեջ ընկնելը: Ծնվելուց անմիջապես հետո մենք սկսում ենք մեղք գործել: Դա մեր էությունն է, քանի որ մենք մեղքով ենք ծնվում: Բայց այժմ, որ քրիստոնյա ենք, Պողոսը նորից հարցնում է. «Հիմա ի՞նչ, մեղք գործենք, քանի որ Աստծո շնորհը մեզ ազատ է արձակել» (6:15): Իհարկե, ո՞չ: Պողոսն ասում է, որ մենք ազատ ենք ընտրություն կատարելու մեջ: Մենք ազատ ենք Նրա ծառան լինելու, որովհետև սիրում ենք Իրեն, Իր գնված ծառաներն ենք (6:16–18), Ղևտացիների 25:39): Գնված ծառան խոստանում է հավատարիմ լինել իր տիրոջը, քանի որ սիրում է նրան: Մենք ուրախությամբ տալիս ենք ինքներս մեզ՝ մեր Տեր Հիսուսին ծառայելու:

Մենք մեղքին կարող ենք միայն «ո՛չ» ասել, եթե Քրիստոսին ունենք՝ մեզ գորացնելու համար: Հին կյանքով միայն մի դեպքում չենք շարունակի ապրել, եթե Նրա Սուրբ Հոգին ապրում է մեր մեջ: Առանց Սուրբ Հոգոյ չենք կարող սուրբ կյանքով ապրել: Նա մեզ ասում է ինչպես ապրել, և մենք անում

Ենք այն, ինչ Նա է մեզ ասում: Հոգին ծշմարտությունը գիտի, և ծշմարտությունը մեզ ազատ է արձակում (Հովհաննես 8:32):

Աստված քրիստոնյաներին կանչում է՝ Իր համար ապրելու: Նրանք կանչված են տարբեր լինելու (Տիտոս 2:14): Լավ քանի այն է, որ Աստված քեզ առաջնորդում է սուրբ կյանքով ապրելու (6:22): Աստված ցանկանում է, որ մենք աճելով ավելի ու ավելի Հիսուսին նմանվենք:

Մենք ավելի ենք Հիսուսին նմանվում, երբ քայլում և խոսում ենք Նրա հետ, և հետևում Իր ուսուցումներին: Մենք Վատահում ենք Հիսուսին, և Սուրբ Հոգին մեզ զորություն է տալիս՝ ամեն օր Նրան հետևելու (2 Կորնիքացիներին 3:18): Քրիստոսը կոչ է անում Իր զավակներին՝ սուրբ կյանքով ապրելու: Այլևս վատ քաների ծառա չենք: Մենք ազատ ենք և ազատություն և ազատ կամք ունենք անելու այն, ինչ Աստված սկզբից ծրագրել էր (Հոռմեացիներին 8:21): Այսպիսով, մենք ազատություն ունենք Աստծո արդարության ծառաները դառնալու (6:18): Եվ օգտագործում ենք մեր ազատ կամքը՝ Քրիստոսի ծառաները դառնալու, նաև այն ամենին, ինչ քարի և ճիշտ է:

Աստծո օրենքի և Աստծո արդարության ծառաներ լինելու տարբերությունը ո՞րն է: Շատ մեծ է: Առաջինը բերում է պատիժ, երկրորդը՝ ներում: Նաև, երբ մենք գտնվում ենք հենց Աստծո թագավորության ներքո, այն տալիս է հնապանվելու զորություն և կյանքում նոր ուղղություն: Կարող ենք մեղքին «ո՛չ» ասել, որովհետև ունենք մեր մեջ քննակող Քրիստոսի զորությունը: Եվ Քրիստոսի հարությամբ մենք ծառանզում ենք հավիտենական կյանքը (6:22):

Երբ մենք պատկանում ենք Քրիստոսին, այլևս դժոխք տանող ճանապարհի վրա չենք, այլ՝ երկինք տանող ճանապարհի վրա (տես 21-րդ Եջի մկարք): Նա մեզ նոր ծնունդ է տվել, որ կարողանանք քաժնեկցել այն, ինչ Նրան է պատկանում: Այն պարզ է, որը երբեք չի կարող փշանալ կամ անհետանալ: Երկնքում այն քեզ համար է պահված (1 Պետրոս 1:4):

Մի՛ շփորչեք Աստվածաշնչում օգտագործված «ստրուկ» կամ «ծառա» բառից: Մենք Աստծո կառավարման ներքո ենք գտնվում, բայց նաև Իր զավակներն ենք: Ես մի օր Նրա հետ երկնքում ենք լինելու: Ինչպիսի՝ արտոնություն է ծառայել այսպիսի սիրող Տիրոջ:

Երբ Աստված փրկում է մեզ.

- ներում է մեր բոլոր մեղքերը և մեզ ազատ է արձակում, որ չպատժվենք մեր մեղքերի համար (6:18, 22):
- Նա մեզ դնում է այն ճանապարհի վրա, որ հետևենք Քրիստոսին (Հովհաննես 10:4–5):
- Նա մեզ Իր Սուրբ Հոգին է տալիս՝ սուրբ կյանքով ապրելու համար մեզ զորացնելու և Հիսուսին հետևելու (1 Պետրոս 1:15):
- Նա մեզ հավիտենական կյանք և երկնքում նոր տուն է տալիս (Հովհաննես 14:2):



## Խոսի՞ր սրա մասին

- Արդյոք ճի՞շտ է շարունակել մեղք գործելը, եթե Աստված մեզ ներում է (6:15):
- Աստված ինչպե՞ս է մեզ ազատում մեղքի գորությունից:
- Քրիստոսին ընտրելուց հետո մենք էլ ի՞նչ պետք է ընտրենք անել (6:19):
- Փրկության մասին Պողոսը ի՞նչ երկու բան է մեզ ասում (6:22):



## Հռոմեացիներին 7:1–25

### Քրիստոսի շնորհիվ ազատված Օրենքից

Այստեղ Պողոսն օգտագործում է հրեական օրինակ՝ Հռոմում ապրող հրեա հավատացյալներին որոշ բաներ բացատրելու համար: Որպես օրինակ նա օգտագործում է ամուսնությունը:

Քրիստոսի մեջ կյանքը կոչվում է «Հոգու նորոգությամբ» (7:6): Այժմ հմարավոր է կատարել Աստծո պատվիրանները առանց կրկին և կրկին մեղք գործելու (6:17, 18): Օրենքը վաստ չէր, բայց այն մեզ հիշեցնում էր մեղքի մասին, որ թագավորում էր մեր մարմիններում: Սա Պողոսի անձնական փորձառությունն էր (7:8): Հոգու ճանապարհը Աստծուն ծառայելու նոր ճանապարհ է, որ հակառակ է հին ճանապարհին, երբ փորձում էինք հնազանդվել գրված Օրենքին: Այս նոր ճանապարհը կոչվում է Աստծո նոր համաձայնություն կամ ոխտ, որն առաջարկված է բոլոր մարդկանց: Այն կարծես ամուսնական համաձայնություն լինի:

Երեմիա մարգարեն Սուրբ Գրքում ասել է. «Ահա օրեր են գալիս, երբ Ես (Յահվե Աստվածը) Խսրայելի տան հետ նոր ոխտ եմ կապելու: Ոչ թե այն ոխտի նման, որ...արեցի այն օրը, երբ նրանց ձեռքից բռնեցի՝ նրանց Եզիզտոսի երկրից դրւու հանելու համար: Իմ օրենքը պիտի դնեմ նրանց ներսում, նրանց սրտերի վրա պիտի գրեմ այն» (Երեմիա 31:31–33): Աստված Արքահամին ասել էր, որ երկրի բոլոր ազգերը օրինվելու են իր ընտանիքի միջոցով: Ուստի՝ ոչ հրեաներն այս խոստումը ստանում են Հիսուսին՝ Մեսիային հավատալով: Այս խոստումը բոլոր մարդկանց համար է:

Օրենքը մարդկանց դատապարտում է մեղքի պատճառով, որն առաջնորդում է մահվան (7:10): Անհնար է հնազանդվել Օրենքի բոլոր կետերին: Օրենքը չի ներում մեղքը: Օրենքը մարդկանց գորություն չի տալիս մեղքի վրա: Սա ճշմարիտ է բոլոր կրոնների օրենքների համար: Ոչ մի օրենք մարդուն չի կարող արդարացնել Աստծո առաջ: Միայն Աստծո շնորհը և Քրիստոսին հավատալը կարող են դա անել: Օրենքը մեզ առաջնորդում է: Աստծո ճշմարտության մեջ և բացահայտում այն ամենը, ինչ Աստված ատում է: Նա մեզ ցոյց է տալիս Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի կարիքը:

Պողոսը հստակ ասում է, որ Աստծո օրենքը սուրբ և բարի է, այն տրվեց

մեղքը բացահայտելու համար (7:12, 13):

Պողոսն ասում է. «Ես մեղքը չի ճանաչի, եթե Օրենքն ասած չլիներ» (7:7): Օրենքը, եթե ասաց. «Այդ ցանկացիր», ստիպեց նրան մտածել բաների մասին, որ ուրիշին են պատկանում (Ելից 20:17): Սենք բոլորս մեղք ենք գործում, որովհետև մեղավոր ենք ծնվել: Սեզ համար մեղք գործելը բնական է: Մեղքը սովորություն է: Օրենքը մեզ հիշեցնում է մեղքի մասին: Սակայն Օրենքը մեզ չի ասում, թե ինչպես հաղորդական մեղքը:

Օրենքը լավ է, բայց այն արթնացնում է ներսի մեղքը: Այն Պողոսին օգնեց հասկանալ Աստծուն հնազանդվելու իր խնդիրը, ինչպես նաև իրեն ասաց, թե որքան Փրկչի կարիք ունի: «Օրենքը հոգևոր է, իսկ ես՝ մարմնավոր» (7:14):

Պողոսը խոսեց իր կյանքի մասին: Նա սիրում էր Աստծո օրենքը և լավագույն ձևով փորձում էր պահել այն, բայց Օրենքը շատ ավելի լավն էր իրենից, և նա միշտ ձախողվում էր (3:23, 7:8–12): Օրենքը «սուրբ է, արդար և բարի» (7:12), բայց Պողոսը մեղավոր էր: «Ուրեմն, այն (օրենքը), ինչ բարի էր, ինձ համար մա՞հ եղավ», - հարցրեց նա (7:13):

«Ես ցանկանում եմ բարին անել, բայց անում եմ այն, ինչ չեմ ցանկանում անել», - ասաց նա: Սրա պատճառն այն է, որ «իմ մեջ ոչ մի բարի բան չի բնակվում» (7:18): Պողոսի մեջ եղած մեղքի պատճառով, նախքան Քրիստոսին ճանաչելը, ոչ մի բան չկար, որ նրան օգներ Աստծո օրենքը պահել:

Նա գիտեր, որ մեղքը թշնամի էր: Պողոսի կյանքը մարտադաշտի էր նման: Նա ցանկանում էր Աստծո կողմից լինել: Կյանքը երկար պայքար էր մեղքի դեմ: Նա զգում էր, որ չէր կարող հաղթել:

«Ի՞նչ խոճախի մարդ եմ ես», - բացականչեց նա, - «ո՞վ կազատի ինձ այս մահվան մարմնից» (7:24): Բայց Պողոսը հանդիպեց Հիսուսին: Իր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի միջոցով նա կարողացավ մարտում հաղթել (7:25): Քանի որ Հիսուսը մահացել էր իր համար, նա հոյս ուներ: Եթե Քրիստոսը խաչի վրա մահացավ, նրա փոխարեն հաղթեց մեղքին և մահվանը: Օրենքը, որ առաջնորդում է դեպի մահ, հեռացված է: Դրա փոխարեն Քրիստոսի սիրո օրենքն է: Պողոսը գիտեր, որ իր աշքերը պետք է հառեր միայն Հիսուս Քրիստոսի վրա, Ում մեջ էր իր միակ հոյսը (Եբրայեցիներին 12:2):

## Խոսի՛ր սրա մասին

1. Նկարագրի՛ր այն նոր ճանապարհը, որն ավելի լավ է, քան` Օրենքը:
2. Պողոսն ինչպե՞ս իմացավ, որ իր խնդիրն ավարտված է (7:25):

## Նյուր՝ մտածելու համար. Սատանան ինչպե՞ս է իր հշխանությունը կորցնում մեզ վրա:

## Չորրության կյանք Քրիստոսի Հոգու միջոցով

Պողոսը գիտեր, որ իին կյանքում

- Աստծո օրենքի պատճառով նա իրեն մեղավոր էր զգում
- Իր մեղասալի արարքների պատճառով մեղավոր էր զգում  
Բայց Պողոսը կարողացել է Հոռմեացիներին 8:1–2-ում գրել հետևյալ հիմնալի խոսքերը.

«Հետևաբար, իիմա դատապարտություն չկա նրանց համար, ովքեր Քրիստոս Հիսուսի մեջ են, ովքեր մարմնապես չեն քայլում, այլ՝ ըստ Հոգու: Որովհետև Քրիստոս Հիսուսի մեջ եղող կյանքի Հոգու օրենքն ինձ ազատեց մերի և մահկան օրենքից»:

Նրանք, ովքեր Քրիստոսի մեջ են, այլևս դատապարտված չեն Աստծո կողմից: Այժմ ես դեկավարվում եմ Սուրբ Հոգու օրենքով: Հիսուս Քրիստոսի արածի շնորհիվ Հոգու օրենքն ինձ կյանք է տալիս: Այն ինձ ազատ է արձակել մեղքի օրենքից, որ մահ է բերում:

8-րդ գիշում Պողոսը կարողանում է կոտրել մեղքի հետ այն ծանր պայքարը, որը նա նկարագրում է 7-րդ գիշում: Դրա փոխարեն նկարագրում է կյանքի Հոգու լույսը՝ գրված մեր սրտերում, ինչպես Երեմիան է մարգարեացել:

Եթե կատահենք Հիսուսին, Նա մեզ Իր Հոգու գորությունը կտա (8:9): Հետևաբար, այժմ մենք կարող ենք ապրել ոչ թե կառավարվելով մեր իին մեղավոր քննությով, այլ՝ Աստծո կողմից: Մենք ապրում ենք այնպես, ինչպես Հոգին է ցանկանում (8:4): Մենք կարող ենք պահել Աստծո օրենքը, քանի որ սկսում ենք վերցնել Աստծո արդարությունը: Ցանկանում ենք անել այն, ինչ Նա է ցանկանում: Քանի որ Հոգին մեր կյանքում է, այլևս չենք վախտնում Աստծո դատաստանից: Մենք ազատ ենք «մեղքի և մահկան օրենքից»: Մենք Աստծո Հոգին ունենք, որ ամբողջ ժամանակ մեզ գորություն տա ապրելու այնպես, ինչպես Աստված է ցանկանում: Պողոսն այն անվանեց. «Հոգու օրենքը, որ մեզ կյանք է տալիս» (8:2):

Եթե գիրքը գցում ես, այն ընկնում է հատակին: Բնական օրենքը՝ ծգողականությունը, այն ներքև է քաշում: Եթե ձեռքդ երկարեցնում և բռնում ես այն, որ ձեռքը բռնում է գիրքը, և այն չի ընկնում: Ըստ ձեռքը նման է Իր Հոգու գորությանը: Մեղքի և մահկան օրենքը մեզ ներքև է քաշում, քայլ Աստծո Հոգին մեզ բռնում է վեր է քարձրացնում:

Աստծո «Հոգու մեջ կյանքի» օրենքն ավելի մեծ է, քան մեղքի և մահկան օրենքը: Մենք ազատվում ենք Իր մեծ օրենքի շնորհիվ:

Պողոսը քաջալերում է, որ յուրաքանչյուր հավատացյալ իմանա, որ ամբողջովին ազատ է մեղքի պատժից և գորությունից. ներված, և ոչ թե դատապարտված (8:1):

Ինչպես կարող ենք ազատ մնալ:

Նախ, հավատացյալը, ով փափագում է Աստծուն հետևել, արագ իրազեկ է դառնում մեղքի մասին: Մեղքը շատ արագ է մեզ դատապարտելու մեջ:

Երկրորդ, Հոգին փոխում է այն բաները, որ մենք ցանկանում ենք: Մենք սկսում ենք փնտրել այն լավ բաները, որ Հոգին է ցանկանում (8:5): Ինչքան ժամանակ, որ Աստծո Հոգուն թույլ տանք մեզ առաջնորդելու, խաղաղություն կլունենանք մեր պատում (8:6):

Նախկինում վատ բաների մասին էինք մտածում: Այժմ մտածում ենք Աստծո բաների մասին: Հոգին մեզ օգնում է մեր խոհերի ու արարքների մեջ (Փիլիպպացիներին 4:8): Մենք ապրում ենք Հոգու առաջնորդության ներքո և փափագում ենք անել այն, ինչ Հոգին է ուզում, որ անենք: Ուստի, եկեք Հոգու հետ մնանք և Հոգու հետ քայլենք (Գաղատացիներին 5:25):

Սեր մտածելակերպ փոխում է մեր գործերը: Սեր մտքերը դեկավարում են մեր գործողությունները: Նախքան Քրիստոսին զալլ՝ Աստծո մասին չինք մտածում և չինք ցանկանում Նրա օրենքը պահել: Ապրում էինք որպես Աստծո քշնամիներ (8:7): Մենք թույլ չինք տալիս, որ Աստծո Հոգին դեկավարեր մեր կյանքը: Սեր մեղավոր եռությունն էր մեզ կառավարում, հետևաբար, չինք կարող համեցնել Աստծուն (8:7-8):

## Սուրբ Հոգու գործը

Սինչև այս պահը, Պողոսը շատ քիչ է խոսել հավատացյալի կյանքում Սուրբ Հոգու գործի մասին: Որոշ մարդիկ ոչ մի տարբերություն չեն զգում: Ուրիշներն եւ Պողոսի նման իրենց կյանքում մեծ փոփոխության փորձառություն են ունենում: Երբ Սուրբ Հոգուն մեր կյանք ենք հրավիրում, մեր սրտերում խաղաղություն ենք ստանում (8:6): Երբ թույլ տանք Աստծո Հոգուն կառավարել մեր միտքը, Նա ամբողջ ճշմարտությամբ մեզ կառաջնորդի (Հովհաննես 16:13): Աստծո Հոգին խաղաղություն է բերում և փոխում է մեր մտածելակերպը և գործելակերպը: Նա բնակվում է մեր մեջ: Սեր մեղավոր բնույթն այլև մեզ չի կառավարում (8:9):

Պողոսը հարցնում է: «Աստծո Հոգին ձեր մեջ բնակվո՞ւմ է: Եթե, այո՛, ապա դու չես ապրում այնպես, ինչպես քո մարմնական բնույթն է ցանկանում, այլ ապրում ես այնպես, ինչպես Հոգին է ցանկանում»: Պողոսն ամեն բան շատ պարզեցնում է իր ընթերցողի համար. Եթե Քրիստոսին չես վստահել որպես քո Փրկիչ, ապա Սուրբ Հոգին քո մեջ չի բնակվում, և դու շարունակում ես ապրել այնպես, ինչպես միշտ:

Այսպիսով, Պողոսը քաջալերում է իր ընթերցողներին. «Եթե Քրիստոսը ձեր մեջ է, ապա մարմինը մեռած է մեղքի համար, իսկ հոգին կենդանի է արդարության համար» (8:10): Քրիստոսն իր Հոգու միջոցով մեզ իր կյանքն է տալիս: Թեև մեր մարմինները մահանում են, նրանք դեռ ունեն այս նոր կյանքը: Սեր մեջ բնակվող Աստծո Հոգին է մեզ տալիս այս նոր կյանքը: Այսպիսով, այժմ ոչ մի բան չպետք է մեզ ստիպի ապրել մեր հին մեղավոր կյանքով:

Անձը, ով վստահում է Քրիստոսին այլև չի ցանկանում իր հին մեղավոր լյանքով ապրել: Եթե նա վերադառնա իր հին ճանապարհներին, Սուրբ Հոգին այնպես է անում, որ նա մեղավոր զօա և ապաշխարի՝ վերադառնալով Աստծո ճանապարհին: Եթե քրիստոնյաները մեղք են գործում, Սուրբ Հոգին նրանց ցոյց է տալիս, թե որտեղ են սխալվել: Նրանք ցավ են զգում իրենց մեղքի պատճառով: Կորցնում են իրենց ներքին խաղաղությունը: Իրենց ներսում անհանգստություն են ունենում: Սուրբ Հոգին նորից ու նորից խոսում է հավատացյալի հետ, եթե մեղք կա նրա կյանքում: Բայց եթե չանսանք Հոգու ճայնին և չապաշխարենք, այլ շարունակենք գնալ մեղավոր ճանապարհով, Հոգին հեռանում է, և մենք չենք կարողանա լսել Նրա զգուշացնող ճայնը: Սուրբ Գիրքն ասում է. «... Եթե նրա ճայնը լսեք, մի՛ խստացրեք ձեր սրտերը» (Սաղմոն 95:8):

## Խոսի՞ր սրա մասին.

1. Սենք ինչպե՞ս կարող ենք ազատ մնալ մեղքից և Աստծո պատժից (8:1, 2, 5, 6):
2. Սուրբ Հոգին ի՞նչ է անում հավատացյալի կյանքում (8:5-9):

## Մենք Աստծո զավակներն ենք

Հին Կտակարանում Աստված Իր ժողովրդին Իր զավակներն անվանեց (Ովսեեի 1:10): Հխոսութ կատարյալ Որդի էր և միշտ հնազանդվում էր իր Հորը: Այժմ Քրիստոսն ասում է, որ մենք՝ Իր հետևորդները, Աստծո զավակներն ենք, այնպես, ինչպես Ովսեեն է մարգարեացել:

Քրիստոնյաներն Աստծո զավակներն են, և այլև Աստծոց վախճանալով չեն ապրում: Աստված մեր Հայրն է, և մենք բոլորս կարող ենք նրան կոչել «Աբբա» (8:15), ինչպես փոքր երեխաներ:

Պողոսն ասաց, որ որպես Նրա զավակներ, մենք կստանանք այն ամենը, որ Նա ունի մեզ համար, բաժնեկից կիխնենք Քրիստոսի փառքին: Բայց նախ պետք է հաղորդակից լինենք Նրա չարչարանքներին. «...Եթե որդիներ, ապա նաև ժառանգենք, Աստծո ժառանգներ և Քրիստոսի ժառանգակիցներ, եթե հաղորդակից լինենք Նրա չարչարանքներին, ապա Նրա փառքին էլ հաղորդակից կիխնենք» (8:17): Քանի որ պատկանում ենք Հխոսութ Քրիստոսին, մենք հավատով Աստծո որդիները և դուստրերն ենք և ժառանգակից ենք այն ամենին, ինչ Քրիստոսը ստանում է Հորից: Մի օր բարձրանալու ենք կատարյալ մարմիններով՝ Նրա հետ լինելու (8:23): Մենք հավիտենական կյանքի Աստծո խոստումն ունենք:

Պողոսն ասաց. «Մենք պետք է հաղորդակից լինենք Նրա չարչարանքներին, որ Նրա փառքին էլ հաղորդակից լինեմք: ...Ներկա ժամանակի չարչարանքներն արժանի չեն զալիք փառքի հետ համենատվելու» (8:17-18): Որպես Աստծո զավակներ՝ ազատորեն (նույնիսկ համարձակորեն) կարող

ենք գալ երկնքում գտնվող մեր Հոր առաջ (Եբրայեցիներին 4:16): Նեղությունները Պողոսին չդադարեցրին քարոզելուց: Նա շարունակեց առաջ գնալ: Դժվարությունները նրա հավատը գորացրին, և նա ավելի շատ էր աշխատում (Կողոսացիներին 1:24, 29): Սուրբ Հոգին նրան օգնում էր իմանալ, որ երկինքը իրական էր, հետևաբար, նա կարող էր ուրախ լինել, նույնական նեղությունների ժամանակ: Նա ապրում էր հավիտենական կյանքի հույսով:

## Հուսահատությունից դեպի հույս

Աղամի մեղքի հետևանքով այն ամենը, ինչ Աստված ստեղծել էր, մահանում է: Աշխարհը և դրա բոլոր արարածները ժամանակի ընթացքում չեն քարելավում, ընդհակառակը՝ քայլայվում են: Էվոլուցիայի միջոցով կյանքի ավելի ու ավելի քարելավման տեսությունը մարդու կողմից ստեղծված միջի է: Աղտոտումն ու քայլայումը, իհվանդությունն ու մահը մեզ հիշեցնում են, որ կյանքում ամեն բան լավ չէ:

Գիտենք, որ Աստծո կամքն էր երկիրն անհետ Աղամի մեղքի պատճառով (Ծննդոց 3:17-18): Բայց մարդ արարածն Աստծո ամենաբարձր ստեղծագործությունն է՝ ստեղծված Իր պատկերով: Նա մեզ պարտականություն տվեց մեր աշխարհի համար հոգալ: Նա նաև Արքահամի ընտանիքն առանձնացրեց և նրանց տվեց հավատով ապրելու Իր կանոններն ու խոստումները: Հետո Նա մի նոր ճանապարհ պատրաստեց բոլոր մարդկանց համար՝ հավատով ապրելու՝ վեր մեղքից, փշացումից ու քայլայումից: Նա դա արեց Սարիամից ծնվելով (Ղուկաս 1:35): Դրանք Աստծո Որդի մարմնի և արյան կերպարանք ընդունելով: Դա արեց Իր արարած մարդուն փրկելու համար, նաև այն աշխարհի համար, որ Նա ստեղծել է (8:21):

Ամբողջ ստեղծագործությունը հեծում է (8:22): Աղամի մեղքի պատճառով աշխարհը հուսահատության մեջ է: Քանի որ Աստված դատեց Աղամին և ասաց, որ նա կմահանա, Աստծո ստեղծած ամեն ինչը նույնպես մահանալու էր (8:21): Եվ այժմ ամեն ինչ, որ Աստված ստեղծել է, հույս ունի և սպասում է, որ Քրիստոսը նորից վերաբառնա: Մենք ապրում և մեր սրտերում ուրախությամբ սպասում ենք գալիք ավելի լավ աշխարհին (8:23): Ամեն:

Մենք սպասում ենք, որ Քրիստոսը նորից վերաբառնա և մեզ վերադարձնի այն փառքը, որ Աղամը կորցրեց Եղեմի պարտեզում: Այնտեղ Աստծո ստեղծած ամեն ինչը կատարյալ էր: Այժմ մարդ արարածը և Աստծո ստեղծած մյուս ամեն ինչը մեղքի պատճառով ցավով տառապում է: Մենք սպասում ենք՝ ցանկանալով, որ Աստված մեզ ընդունի Իր տուն, որովհետև մենք Իր որդեգրությամբ գավակներն ենք (8:23): Սա է մեր հույսը:

«Աստծո ստեղծագործությունը հեծում է երկունքի ցավով...», - ասաց Պողոսը (8:22): Բայց մարդիկ ավելի կարեոր են, քան բույսերն ու կենացները: Սարդկությունն Աստծո ստեղծած ծրագրի ամենամեծ մասն է:

կազմում: Եվ Աստված Իր միակ Որդուն ուղարկեց մարդկության համար մեռնելու:

Աստված Իր Սուրբ Հոգին է մեզ տալիս: Սուրբ Հոգին մեզ օգնում է, երբ զգում ենք, որ այլևս ուժ չունենք (8:26): Հոգին մեզ համար աղործում է, որ զորավոր լինենք և սովորենք Աստծուն Վստահել և տեսնել, թե ինչպես է Նա մեր կյանքում գործում:

Հաճախ, երբ դժվարությունների մեջ ենք, չգիտենք ինչպես աղործել: Արդյո՞ք պետք է խնդրենք Աստծուն, որ մեզ փրկի այս ցավից: Թե՞ պետք է խնդրենք, որ մեզ օգնի, մինչ կրում ենք այն: Հաճախ չգիտենք, թե ինչպես մտածենք, բայց Սուրբ Հոգին ամեն ինչ գիտի մեր մասին, և Նա մեզ համար աղործում է այնպես, ինչպես Աստված է ուզում (8:27): Սա այսպես է, քանի որ Աստված ցանկանում է, որ ապրենք Իր պատկերով, ինչպես արարչագործության սկզբում:

Չո խոսքերով բացատրի՛, թե քրիստոնյաներն ի՞նչ հույս ունեն այս մեռով փշացած աշխարհում:

## Հռոմեացիներին 8:28–39

### Մենք կիառենք Զրիստոսի միջոցով

«Գիտենք նաև, որ բոլոր բաները միասին բարուն են գործակից նրանց համար, ովքեր սիրում են Աստծուն» (8:28): Ի՞նչ հիանալի խոսքեր: Աստծոն այս հիանալի ճշմարտությունը, որ բացահայտվել է Պողոսին, գրված է մեզ բոլորին համար, որ կարդանք: Աստված միշտ գործում է մեղքից փշացած Իր աշխարհում: Նա գործում է ամենուր: Նա ամեն բան միայն բարուն է գործակից անում: Նա այնպես է անում, որ ամեն բան մեզ համար բարու գործակից լինի, եթե հետևենք այն ճանապարհին, որ Իր Հոգին է մեզ ցույց տալիս:

Նա մեզ կանչեց, քանի որ Իր շնորհով և ողորմությամբ ծրագիր ունի մեզ համար (Եփեսացիներին 2:8–10): Նա մեզ ընտրեց, և եթե մենք ընտրենք հետևել, ապա Հոգին մեզ ճանապարհ ցույց կտա: Եթե վաստ բաներ պատահեն, եթե ցավի կամ տառապանքի հանդիպենք, եթե սիրելի մեկին կորցնենք, եթե մեր աշխատանքը կորցնենք, եթե անարդարացի հալածանքի ենթարկվենք կամ բանտ նետվենք ել, գիտենք, որ Աստված դա մեզ համար բարու գործակից կանի: Դա Նրա խոստումն է: Մի՛ կասկածիր, որ Աստված քո բարու համար է գործում: Ինչո՞ւ: Որովհետև Նա սիրում է քեզ:

Երբ քայլում ենք Հիսուսի հետ, գիտենք, որ Աստված է ծրագրում մեր կյանքը և նոյնին ամենափոքր բաները Նա այնպես է անում, որ մեր բարուն գործակից լինեն: Մենք վստահում ենք Նրան, երբ կյանքը հեշտ է և վստահում ենք, երբ կյանքը դժվար է: Մենք վստահում ենք, որ Նա ամեն բան բարուն գործակից կանի:

Մենք Աստծոմիջոցով կողմից կանչել ենք Իր նպատակի համար, ոչ թե՝ մեր: Մենք ընտրել ենք Հիսուսին հետևել, և Աստծո Հոգին է ճանապարհը ցույց տալիս: Եվ եթե մեր ճանապարհը ցավի և տառապանքի միջով է, Նա դա բարուն գործակից կանի: Մի՛ նայիր ուրիշներին, ում ընթացքը շատ տարրեր է քոնից: Կառչիր այն հավատից, որ քեզ այս ճանապարհն է տրվել, որ ոչ-ոք քո մրցանակը չերցնի (Հայտնություն 3:11):

Աստված ցանկանում է, որ մենք Իր Որդու նման լինենք (2 Կորնթացիներին 3:18): Այն ամենը, ինչ պատահում է քրիստոնյայի հետ, մեզ Նրա նման դարձնելու համար է: Սուրբ Հոգին այնպես է անում, որ այն գործի մեր կյանքում: «Աստված Ինքն է, որ գործում է ձեր մեջ» (Փիլիպպեցիներին 2:13):

Մենք չենք կարող ավելի լավ կյանք ցանկանալ, քան այն կյանքը, որ Աստված է մեզ համար ցանկանում: Մենք վստահում ենք, որ մեր տառապանքների մեջ Նա կանի լավագույնը: Ոչ մի բան մեզ չի կարող բաժանել Աստծո սիրուց (8:39): Պողոսը շատ անգամ ապացուցեց, որ սա ճշմարիտ է, մինչ անցնում էր մեծ դժվարությունների միջով (2 Կորնթացիներին 11:23-29): Նա ապացուցեց, որ ոչ մի բան չի կարող կանգնել մեր և Աստծո միջև:

Չատ քրիստոնյաներ ասում են, որ Հռոմեացիներին 8-րդ գլուխը նրանց սիրելի հատվածն է: Այն խոսում է Սուրբ Հոգու առաջնորդությամբ ու գորությամբ հավատով ապրելու մասին: Այն մեզ ասում է, որ բոլոր բաները միասին բարուն են գործակից լինում բոլոր նրանց համար, ովքեր ճշմարտապես սիրում են Աստծոն: Այն մեզ ասում է, որ ոչ մեզ չի կարող բաժանել Աստծո սիրուց, որ Քրիստոսի մեջ է: Այն մեզ ասում է, որ կարող ենք հարթանակ ունենալ մեղքի վրա: Ինչպես նաև մեզ հիշեցնում է, որ ուրախություն և առանձնաշնորհում է Աստծո զավակներ լինելը: Պողոսը հիացած և զարմացած է բոլոր մարդկանց համար Աստծո փրկության իր բարի լուրով:

Բայց մենք պետք է նաև հիշենք, որ Պողոսն անհանգստացած և տխուր է Հռոմի եկեղեցում որոշ կրոնավոր հավատացյալների պահիվածքի պատճառով, հատկապես նրանց, ովքեր իր ազգակիցներն են և նոյն ավանդույթներն ունեն, ինչպես՝ ինքը (9:3): Նա ցանկանում է, որ բոլորը հավատով ապրեն Քրիստոսի մեջ, ում Աստված մեկընդմիշտ զրհեց բոլոր մարդկանց համար: Սա նոր սկիզբ է Աստծո մարդկանց համար, որ մենք անվանում ենք Նոր Կտակարանի եկեղեցի: Թող բոլորս պատրաստվենք մի կողմ դնել մեր սովորույթները և աճել մեր հասկացողության մեջ, թե ինչ է նշանակում Քրիստոսով ապրել, ինչպես Աստված էր ծրագրել:



## Խոսի՞ր սրա մասին

- Եթք մենք Աստծո զավակներն ենք, որո՞նք են այն օրինությունները, որ Նա ցանկանում է, որ մենք ունենանք (8:17):
- Քրիստոսը Պողոսին ի՞նչ է տալու իր բոլոր դժվարություններից հետո (8:23):
- Աստված մեզ ի՞նչ է տալիս, մինչ մենք սպասում ենք Իր խոստումներին (8:2, 5, 9, 11, 13, 15, 26, 27):



**Նյոթ՝ մտածելու համար.** Ինչպես կարող ենք վստահել մեր կյանքի համար Աստծո ծրագրին (8:31–39): «Դու քայլո՞ւմ ես քեզ համար Աստծո ծրագրով: Ինչպես զիտես:

## Ամփոփում

Հռոմեացիներին ուղղված իր թղթի առաջին ութ գլուխներում Պողոսը ներկայացնում է աստվածաշնչյան հիմք հանդիսացող իր ուսուցումներից որոշը: Սրանք քրիստոնյայի հավատքի հիմնական ճշմարտություններն են, որը ճշմարիտ փրկության իմաստն է ցույց տալիս: Պողոսը հրեա հավատացյալներին զգուշացնում է, որ մյուս քրիստոնյաներին չձանրաբեռնեն իրենց սովորույթներով և կանոններով: Հրեաները և ոչ հրեաները կարիք ունեն Քրիստոսին հավատալով ձեռք բերված ազատության փորձառությունը զգալու, ինչպես Պողոսն է այդ փորձառությունն ունեցել:

«Արդարությունը Օրենքից չի զալիս: Այն զալիս է, որովհետև ես հավատում եմ Քրիստոսին: Այն զալիս է Աստծոց: Այն հավատով ենք ստանում», - բացատրում է նա. «Ո՞չ թե իմ արդարությունն ունենալով, որ Օրենքից է, այլ՝ այն, որ Քրիստոսի հավատից է, այն արդարությունը, որն Աստծոց է՝ հավատով» (Փիլիպպեցիներին 3:9):

Առանց հավատի մեր փրկությունն ամբողջական չէ: Հավատը դեպի փրկության տանող դրուր կամ մուտքն է: Բայց այն նաև դրուն է՝ Նրան ծառայելու և ամենօրյա կյանքում Սուրբ Հոգու զորությունը զգալու: Այն նոր կյանք կամ նոր ծնունդ է բերում, իսկ ծննդից հետո՝ ած: Աստծո փրկության ծրագրի կարևոր մի մասը պատղաբեր կյանք ունենալն է, եթե պատրաստ ենք Քրիստոսի հետ տառապելու (8:17): Նոր հավատացյալների հավատը և ազատությունը չպետք է խանգարվի կրոնին հետևող մարդկանց անկարևոր կանոններով և սովորույթներով: (Պողոսը հոգևոր ածի մասին ավելի խոսում է հռոմեացիներին ուղղված թղթի 2-րդ մասում):

Հռոմեացիներին ուղղված իր թղթի առաջին ութ գլուխներում Պողոսն իր ընթերցողին ներկայացնում է քրիստոնեական կրոնի ամենամեծ հիմնական ճշմարտություններից մի քանիշը և Աստծո կողմից Իր Որդու միջոցով տրված ճշմարիտ փրկության իմաստը.

- **Ապաշխարություն** նշանակում է մեղքից հեռանալ և Աստծուն դառնալ:
- **Ներում՝** Աստծո կողմից մեր մեղքերի ներում և կյանքի նոր սկիզբ:
- Աստծո **Արդարություն**՝ Աստծո կողմից տրված է բոլոր հավատացյալներին:
- **Արդարացում** նշանակում է ներված և ընդունված Քրիստոսի միջոցով:
- **Ազատություն՝** որպես Քրիստոսի ծառա՝ Աստծուն ծառայելու ուրախությունն իմանալ:
- **Վստահություն**՝ Աստծո և Քրիստոսի հետ հավիտենական կյանքը ստանալու վստահություն:

Բոլորն էլ կարող են նույը գործել այս ճշնարսության մեջ հավատի, Քրիստոսի և Աստծո շնորհի միջոցով: Երբեմն այս բաները մեր հասկացողությունից վեր են, բայց մենք կարող ենք վստահել Պողոսի ուսուցմանը: Այն Աստծո ներշնչված խոսքն է: Պողոսը շատ լավ գիտեր Աստծո Սուրբ Գրությունները (պատմություն, օրենք և մարգարեություն): Նա Սուրբ Գրքին բարձ հասկացողություն է տալիս: Նա գիտեր, որ Աստված չի ուզում, որ Իր ժողովուրդը վերադառնա ստրկության (Ովսեն 11:4, 5): Նա Դամասկոս գնիալու ճանապարհին ամբողջովին փոխվել էր (Գործը Առաքելոց 9:3–20) և վստահ էր իր կոչման մեջ, որ պեսը է Հիսուսում Աստծո բարի լուրջ քարոզեր հրեաներին և ոչ հրեաներին:

Պողոսն առաջին յոթ գլուխներն ամփոփում է՝ ասելով 8:1-ի հայտնի բառերը. «Հետևաբար, հիմա դատապարտություն չկա նրանց համար, ովքեր Հիսուս Քրիստոսի մեջ են»:

Դատապարտությունը արդարացման հականիշն է: Աստծո շնորհի և Իր Որդի Հիսուսի միջոցով քրիստոնյա հավատացյալները չեն դատապարտվում, այլ նրանց տրվում է կյանքի մի նոր սկիզբ, որը խոստանում է.

- **Ազատություն մեղքի պատժից**
- **Ազատություն մեղքի զգացողությունից**
- **Ազատություն մեղքի իշխանությունից**
- **Փոխարենը, մենք ազատ ենք ընտրելու դառնալ կենդանի Քրիստոսի ծառաները՝ սիրելով և Նրան հնազանդվելով (Հովհաննես 14:15, 23):**

4, 5, 6, 7 և 8-րդ գլուխների վերջում Պողոսը խոսում է Քրիստոսի հանդեպ մեր ունեցած պարտքի մասին.

- **Հիսուսը մեր մեղքերի համար մահացավ (4:25)**
- **Հիսուսը հնարավոր դարձրեց, որ մենք արդարանանք Աստծո առաջ (4:25)**
- **Հիսուսը մեր հավիտենական կյանք ունենալը հնարավոր դարձրեց (5:21, 6:23)**
- **Հիսուսը մեզ ազատում է օրենքով ապրելու մեր հին կյանքից և մեղքի բակարդում լինելու (7:25)**
- **Հիսուսը մեզ ապահով է դարձրել Աստծո սիրո մեջ (8:38–39):**

Հիսուսը մեզ օգնում է՝ ուղարկելով Սուրբ Հոգուն: Ուստի՝ մենք այլև կարիք չունենք պայքարելու մեղքի դեմ, ինչպես և չպետք է տխրենք, եթք տառապենք, քանի որ ապրում ենք՝ հուսալով Աստծո փառքին (8:17, 18): Այժմ կարող ենք ապրել իր զորությամբ, սիրով, որախությամբ և սրբությամբ լի կյանք՝ հուսալով հավիտենական կյանքին և փառքին: Ալելուի՝ ա:

Սողոսը հալածում էր Հիսուսի հետևորդներին: Բայց Հիսուսը հանդիպեց Նրան Դամասկոսի ճանապարհին: Հրեա փարիսեցի Սողոսը հետո դարձավ հրեա առաքյալ և ուսուցիչ Պողոսը: Նույնիսկ հոռմեական կայսրը նրան չէր կարող լոեցնել: Իր մահից շատ տարիներ անց իր նամակներն են մեզ հետ խոսում: Քսան դար Աստծո Խոսքը Պողոսի միջոցով կառուցել է Աստծո յնտանիքը՝ եկեղեցին: Եհովա Աստծո ճշմարտությունը հավերժ կտևի:

**Հրատարակված է**

**Տպագրված է**

**Աստված հնարավորություն տվեց «Մանանա» Աստվածաշնչի  
մեկնորյունները տպագրելու տարրեր երկրներում՝ Հայաստան, Բենին,  
Բուդապեշտիա, Բուրկինա Ֆասո, Բուրմանդի, Կամերուն, Կամբոջիա, Կոնգոյի  
հանրապետություն (Կինշասա և Կարանգա), Կոնգո (Բրազավիլ),  
Եգիպտոս, Երովայիա, Գանա, Գվատիմալա, Հնդկաստան, Շենյա, Կոստիվա,  
Լիբերիա, Մալավի, Մալի, Մոնղոլիա, Մոզամբիկ, Սիանմար, Նիգեր,  
Նիգերիա, Պակիստան, Ռուանդա, Սերբիա, Սիերա Լեոնե, Սուդան,  
Շվեյցարիա, Տանզանիա, Տոգո, Ուգանդա, Զամբիա, Զիմբաբվե և  
43 լեզուներով, ներառյալ Բրեյլով (կույրերի համար)**

**Download over 20 Easy English Manna Bible teaching  
commentaries free at**

**<https://www.manna-publications.org.uk/English-downloads.shtml>**

Also in French, Portuguese and Spanish

Affiliated to **Avail**, UK registered charity 1017386

Parent organisation **Manna Publications (USA):**

[www.mannapublications.org](http://www.mannapublications.org)

## **ՍԻԱՅՆ ՔՐԻՍՏՈՍՈՎ Հռոմեացիներին 1-ին մաս 1 – 8 գլուխներ**

- Աստծո սուրբ գրություններն ու քրիստոնեական հավատը
- Քրիստոնյա հավատացյալների համար բացատրված վեց մեծ ճշմարտություններ
- Բոլորը մեղանչել են, այդ պատճառով էլ բոլորը Փրկչի կարիքն ունեն
- Փրկությունն Աստծուց է Քրիստոսին հավատալու միջոցով
- Հավատ միայն Հիսուսի վրա
- Աստծո արդարությունը տրվում է բոլոր նրանց, ովքեր հավատում են
- Սուրբ Հոգու օգնությամբ ապրել ու աճել
- Որպես Աստծո զավակներ՝ փրկված հավիտենական կյանքի համար

Այս գիրքը մեզ սովորեցում է, թե ինչպես մենք բոլորս ի ծնե մեղսունակ մարդիկ ենք: Ինչպես մենք բոլորս, նույնիսկ «քարի մարդիկ», կարիք ունեն ճիշտ լինել Աստծո հետ: «Պողոսը մեզ սովորեցնում է, որ Աստծոն վստահելը մեզ ի զորու է դարձնում մեր կյանքը վայելել, նույնիսկ երբ դժվարությունների միջով ենք անցնում: Պողոսը ուսուցանում է Աստծո փրկությունը Հիսուս Քրիստոսին հավատալու մեջոցով:

«Մանան» տպագրությունը հայրայթում է Աստվածաշնչի մեկնություններ՝ Ֆրեդ Սորիսի հեղինակությամբ (ԱՍՆ): Տարիներ շարունակ Ֆրեդը և իր կիս Լորնան ճանապարհորդել են աշխարհով մեկ՝ սովորեցնելով և քաղողքելով: Երբ տուն վերադարձան, գրի առան իրենց նորերը տպելու և վաճառելու համար, որտեղ որ հոգենոր ուսուցման կարիքն էր զգացվում: Մեծ Քրիտանիայի այս վերանայված հրատարակությունը գրված է հեշտ կարդացվող համաշխարհային անգերենով, որը կիեշտացնի հասկանալը և այլ լեզուներով արագ թարգմանությունը: Կարդացողներին այն ընդհանուր տեղեկություններ է տալիս, իսկ Աստվածաշունչ սերտողներին՝ օժանդակ նյութեր:

Այս գրքերը կարող եք ինքնուրույն կամ խմբակային ուսուցումների ժամանակ օգտագործել: Դրանք ձեզ կսովորեցնեն Աստծո ճշմարտությունը, կօգնեն ծանոթանալ Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի հետ: Ձեզ կօգնեն խստել Աստծո նկատմամբ ունեցած ձեր հավատի մասին: Ձեզ սիսալ ճանապարհներից կապահեն՝ ճիշտն ու սիսալ զանազանելին ուսուցանելով: Ձեզ կսովորեցնեն այն բաները, որ Աստված սիրում և ատում է:

Աղոթում ենք, որ Աստվածաշունչը և այս նյութերը կարդալու հետևանքով նոր խաղաղություն և նպատակ գտնեք ձեր կյանքերում:

## **«ԱՍՆԱՆ» ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Հիմք հանդիսացող Աստվածաշնչի մեկնություններ**